



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ՊԱՇՏՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Միտարիտարականի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՔԱՅՐՄ 1884 ԱՄԵՆ

ՆԻՍՏ ԺԱ.

14 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1884



ԿՐԿՈՒՆՔ

1884

# ԳԻՒԱՆՔ ԱՅԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

## ՎՄԱՅՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տիգրան Լ.Ֆէնտի ԵՆԱՌՖԵԱՆ	Ս. Արեւոյե
Բրիտանուոր » Ղազարոսեան	Բ. »
Յովհաննէս » Թորոսեան	Գ. »
Յովհաննէս » Արշակունի	Ա. Արեւոյե
Յակոբ » Պօլնակեան	Բ. »
Ստեփան » Տամատեան	Գ. »

### Ձեռնաստրեան Գիւան

Մատթէոս Եսկ. Իղժիրլեան Արեւոյե  
 Գարեգին վրդ. Թաթարեան  
 Մարկոս Լ.Ֆէնտի Աղաբէգեանց

### Յարաբերութեան Գիւան

Յովհաննէս Լ.Ֆ. Թորոսեան Արեւոյե  
 Ռուբէն » Պուլկուրեան  
 Վիլէն » Օրմանեան

### Դաստիարակութեան Գիւան

Ռէթէոս Լ.Ֆ. Պերպէրեան Արեւոյե  
 Գէորգ » Ապտուլահ  
 Միքայէլ » Մամիկոնեան

### Իրաւաստրեան Գիւան

Յովհաննէս ԲՆՅ. Մկրեան  
 Յակոբ Լ.Ֆէնտի Արշակ  
 Գարրիէլ » Նորատուհեան

### Կալուածոց Գիւան

Բրիտանու. Լ.Ֆ. Ղազարոսեան Արեւոյե  
 Յակոբ » Եէմէնիճեան  
 Պօղոս » Թորգոմեան

### Նախաձեռնութեան Գիւան

Մինաս Լ.Ֆէնտի Չերաղ Արեւոյե  
 Յովհաննէս » Արշակունի  
 Նշան » Պօյաճեան

### Համարակալութեան Գիւան

Կարապետ Լ.Ֆ. Սըվաճեան Արեւոյե  
 Մկրտիչ » Ճանըմեան  
 Գառնիկ » Յովակիմեան

### Իմբացրութեան Գիւան

Հաբարձուժ Լ.Ֆէնտի Ալաճաճեան  
 Յակոբ » Գուրգէն  
 Կարապետ » Խթիւճեան

# ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄՆ 1884 ԱՄԻ

ՆԻՍՏ ԺԱ.

14 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1884

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Սիմէոն Եպիսկոպոս Սէֆէրեան (Առաջադաս) .  
ԱՏԵՆԱԿԵՏ. — Տիգրան Լէֆէնտի Եռսուֆեան

## ՕՐԱԿԱՐԳ

Ա. — Ատենական դործողութիւնը .

Բ. — Շարունակութիւն վիճաբանութեան ի վերայ Առաջնորդական խնդրոյ .

Գ. — Խնդիր երեսփոխանութեան թաղէոս Լէֆէնտի Պէկեանի .

Ատենապետ Լէֆէնտի ատենը կը բանայ ժամը 3ին , 'ի ներկայութեան 26 երեսփոխանաց , որոց վերջի թիւն 44 ի կը յանդի :

### ՕՐԱԿԱՐԳ

Ա.

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԻՔ

1.

Վաւերացումն ժ. նստի Ատենադրութեան .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Վերջի նստի ատենադրութիւնն ժողովոյ ընդունելութեան են .

թարկելէ առաջ , կը հրաւիրեմ ղերեպիտանս այս մասին յայտնել իւրեանց դիտողութիւնքն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ԵՒ ԶՕՊԱՆԵԱՆ ԷՅԲ. —

Այդ ատենադրութիւնն այս առաւօտ միայն ստացած լինելով , կ'առաջարկեմ յաջորդ նստին թողուլ անոր վաւերացումը :

ԶԱՅՆԵՐ — Յաջորդ նստին թող մնայ :

Ատենապետ Լէֆէնտի առ այս ժողովոյ կամայ կը դիմէ , որ Կ'ՈՐՈՇԷ յաջորդ նստին վերապահել ժող նստի ատենադրութեան վաւերացումը :

2.

Տեղեկագիր Երեսփոխանական ընտրութեան  
Խասգիւղի .

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅԺ. — Խասգիւղի թաղէն ե-  
րեսփոխանական ընտրութիւն մը կատարուած  
և տեղեկագիրն հանդերձ Վարչութեան պաշ-  
տօնադրով Կիւանխա աւանդուած լինելով, կը  
փութամ ժողովոյդ ներկայել զայն :

Վսեմափայլ Ատենապետ Էֆէնտի  
Ազգային Երեսփոխանական Ժողովոյ .

Մայրաքաղաքիս Խասգիւղի թա-  
ղէն Երեսփոխան ընտրուած է ,

Մեծ. Նշան Էֆէնտի Փափազեան ,  
որ ստանձնած է սոյն պաշտօնն :

Քաղաքական Ժողովն ընտրելոյն օ-  
րինական հանդամանքները քննելով՝ ըստ  
ամենայնի համաձայն կը գտնէ Սահմա-  
նադրութեան արամադրութեանց , և կը  
փութայ ներկայ ծանօթագրով ընտրու-  
թեան տեղեկագիրն և ընտրելոյն յանձ-  
նառութեան գիրն ներկայել Պատկառե-  
լի Ժողովոյդ ՚ի քննութիւն և ՚ի պարտ  
ու պատշաճ տնօրինութիւն :

Մնամք յարգանօք

Պատր. Փոխանորդ

Գեորգ Ծ. Վրդ. Բուսմուկեան

Ի դիմաց Ազգ. Վարչ. Քաղ. Ժողովոյ

Ատենադպր Ատենապետ

Գեորգ Գլըճճեան Ս. Մարտոսեան

6 Սեպտեմբեր 1884

Կ. Պոլիս

Բարձրաշնորհ Տ. Տ. Ներսէս Սրբազան  
Արքեպիսկոպոս Պատրիարք Ամենայն Հա-  
յոց Թուրքիոյ և Նախագահ Ազգ. Կեդրո-  
նական Պատկառելի Վարչութեան .

Բարձրաշնորհ Սրբազան Հայր .

Ըստ յանձնարարութեան Ձերումդ

Բարձ. Սրբաշնութեան՝ թաղիս կողմա-  
նէ ընտրեալ վեց Ազգ. երեսփոխաննե-  
րէն Մեծապատիւ Յակոբ Էֆէնտի Տե-  
րունեանի տեղ՝ որ հրաժարած էր , նո-  
րոգ ընտրութեան համար ընտրողական  
Ժողովս կազմուելով, հարկ եղած օրի-  
նականնախապատրաստութիւններն տես-  
նելէ յետոյ՝ անցեալ Յունիս 3 կիրակէ  
օրը քուէարկութիւն կատարեց , որուն  
թաղիս 200 ընտրողներէն միայն 63 ընտ-  
րողք մասնակցեցան , 17ը՝ նամակաւ , և  
46ը՝ անձամբ :

Նոյն օրը , ՚ի ժամ 4 , ՚ի ներկայու-  
թեան Ժողովրդեան և ընդ հսկողու-  
թեամբ մասնաւոր քննչաց քուէհամարը  
կատարուեցաւ ՚ի Ս. Ստեփաննոս Եկե-  
ղեցւոյ գիւղիս , և քուէհամարի պահուն  
ո և է գիտողութիւն չի լինելով Ժողովրդ-  
եան կողմանէ , օրինական գործողութիւն-  
քըն լրանալէ յետոյ , ըստ արդեանց  
քուէհամարի՝ 37 քուէիւ բացարձակ ա-  
ռաւելութիւն ստացաւ , այսինքն ազգ.  
երեսփոխան հռչակուեցաւ Մեծապատիւ  
Բարթող Էֆէնտի Թէլեան :

Բայց Նորին Մեծապատուութիւնը  
առ ընտր. Ժողովս հրաժարագիր յղած՝  
և հակառակ Ժողովոյս թախանձանաց  
իւր հրաժարականին վրայ սնդած լինե-  
լով, սոյն պաշտօնը ընտր. Ժողովոյս կող-  
մանէ առաջարկուեցաւ Մեծ. Տօքթ. Տի-  
րան Քափամաճեանի՝ որ իբր քուէից յա-  
ջորդ առաւելութիւնը ստացող , բացար-  
ձակ առաւելութեամբ ընտրելոյն հրա-  
ժարմամբ՝ ըստ 31րդ յօդուածոյ ընտրա-  
կան հրահանգի՝ սոյն երեսփոխանական  
աթոռին վրայ իրաւունք կը ստանար :

Սակայն յիշեալ երկրորդ ընտրեալն  
եւս սոյն ազգային պաշտօնը մերժելով

Ընտր. ժողովս կրկին անգամ քուէարկութիւն ընել արժան համարեց :

Պէտք եղած օրինական նախապատրաստութիւնները անթերի 'ի գործ դրուելէ յետոյ , այս երկրորդ քուէարկութիւնը տեղի ունեցաւ 'ի 29 Յուլիս , կիրակէ , և այս անգամ քուէարկութեան մասնակցեցան թաղիս 200 ընտրողներէն միայն 43 ընտրողք , յորոց 28ը՝ անձամբ , և 17ը՝ նամակաւ :

Նոյն օրը , 'ի ժամ 4 1/2 , 'ի ներկայութեան ժողովրդեան և ընդ հսկողութեամբ յատուկ քննչաց առանց ո՛ր և է դիտողութեան քուէհամարը կատարուելով՝ 27 քուէիւ բացարձակ առաւելութիւն ստացաւ Մեծապատիւ Նշան էֆ. Փափազեան , սեղանաւոր :

Հետեւաբար Պատուարժան ազգայինը ըստ օրինի Ազգ. երեսփոխան ընտրուած լինելով , փութացինք սոյն ընտրութիւնը ծանուցանել իրեն , որ՝ ընդունելով զայն , յանձնառութեան գիրը փութաց յղել առ մեզ :

Ընտր. ժողովս՝ սոյն յանձնառագիրըն ծրարեալ ընդ գրոյս առ Ձեր Բարձր Սրբազնութիւնն յղելով 'ի պարտուպատչած անօրինութիւն , յոյս մեծ ունի որ՝ ինչպէս Ձեր Բարձր Սրբազնութիւնը , նոյնպէս Ազգ. կեդր. Պատկառելի Վարչութիւնն և Պատկառելի Երեսփոխանական ժողովը եւս՝ վաւերելով սոյն օրինաւորապէս կատարուած ընտրութիւնը , պիտի բարեհաճին պսակել թաղիս ընտրողաց փափաքը :

Այս առթիւ մատչելով 'ի համարյր Սրբոյ Աջոյդ , պատիւ ունիմք լինել ,

Սրբազնասուրբ Հայր , Ձերումդ Բարձու Սրբազնութեան

Խոնարհ ծառայք

Ի դիմաց Ընտրողական ժողովոյ

Նախագահ

Գրիգոր Եպիսկոպոս Տ. Պօղոսեան

Ատենադպիր

Ատենապետ

Մ. Մուշեղեան Սարգիս Ա. Պերպիբեան

6 Օգոստոս 1884

Խասդիւշ

Գերապատիւ Տէր .

Պատիւ ունեցայ ստանալ Ձերդ Գերապատուութեան 31 Յուլիս թուակիր գրութիւնն , որով կը տեղեկացնէք ինձ թէ՛ խասդիւղի Պատ. Թաղեցիք պատուեր են զիս իւրեանց քուէներով և կ'ուղեն իրենց կողմանէ իբր վեցերորդ երեսփոխան յղել յ'Ազգային ժողովն :

Սոյն պաշտօն՝ թէպէտ իմ արժանիքէ շատ բարձր , բայց խրախուսուելով Աղնիւ թաղեցւոյդ առ իս ցոյց տուած վստահութենէ , կը փութամ համակերպիլ Ձերդ Սրբազնութեան հրաւերին , յուսալով թէ՛ պիտի կարողանամ իմ փոքրը ծառայութիւններ նուիրել այս առթիւ սիրելի Ազգիս և մասնաւանդ յայսմ պաշտօն զիս կոչող Թաղին , ցորչափ ներեն ինձ անձնական զբաղմունքս :

Հաճեցէք ընդունիլ Գերապատիւ Տէր խորին մեծարանաց հաւաստին :

Որում մնամ

Ձերդ Սրբազնութեան խոնարհ ծառայ Ն. Փափազեան

3/15 Օգոստոս 1884

կալաթա

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Սոյն ընտրութեան օրինաւորութեան դէմ եթէ խօսք ուղղ չ'կայ, ժողովոյդ վաւերացման կ'ենթարկեմ զայն :

Ոչ ոք զիտորութիւն ընելով, Ատենապետ էֆէնտի քուէի կը դէն Խաղաղիկ երեսփոխանական ընտրութեան օրինաւորութիւնն որ կընդունին միաձայնութեամբ :

Հետեւաբար Ատենապետ էֆէնտի ազգային երեսփոխան կը ՀՈՉԱԿԷ

ՉՆՆԱՆ Էֆէնտի Փափագեան

(Թեք Էս-Էր-Գ'ան)

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Կը տեսնեմ թէ Ընտրողական և Գաւառական ժողովոյ կողմանէ եկած տեղեկագիրք խիստ ընդարձակ և միանգամայն լի են անկարևոր մանրամասնութեամբ : Ուստի կ'առաջարկեմ, որ երբ այդ տեսակ տեղեկագիրք հոս կուզան, Գիւանն նախապէս ուսումնասիրէ զանոնք և միմիայն անոնց օրինաւորութիւնն յայտարարէ յատենի ժողովոյս, որով թէ՛ ժամանակի և թէ՛ մասնաւոր տպագրական տեւելոյ ծախսուց խնայողութիւն մը յառաջ կուզայ :

ԹՆԿՐԵԱՆ Ա. ԷՅ. — Օրէնքը կը տրամարդէ որ տեղեկագիրք իրենց ամբողջութեամբն արձանագրուին յ'ատենագրութեան : Այսն զի խիստ շատ անգամ կը պատահի որ անոնց մէջ օրինական թերութիւններ տեղի ունենան, ինչպէս պատահեցաւ Բաղէշի և այլ տեղեկագրոց տոթիւ զորս ժողովն վերադարձուց առ ընտրող յ'ամբողջացումն :

Ուստի, ըստ իս ըստ է որ այս մասին լինելը ու է բարեփոխում վերապահեմք մեր ներքին կանոնագրի վերաբնութեան պահումն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Կըստի թէ՛ տեսնեմ

զեկագրոց մէջ թերութիւններ կրնան պատահիլ : Բայց երբ Գիւանն ուսումնասիրէ զանոնք, որպէս կ'առաջարկէի, անշուշտ պիտի նշմարէ այդ թերութիւններն և ըստ այնմ չարժի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Ղազարոսեան էֆէնտի կողմանէ եկած առաջարկն շատ օրինաւոր է : Այս տեսակ տեղեկագրեր հարկ է որ ըստ կարի ամիսի և համառօտ լինին առանց ՚ի րայ թողու օրինական կէտերն, զգուշանալով երկարարանութենէ կամ աւելորդ կըրկանութիւններէ : Այս զգուշութիւնն՝ եթէ երեսփոխան Տեարք ևս իրենց խօսից չարքին մէջ բարեհաճին ՚ի դործ դնել, յայնժամ մեծ խնայողութիւն մը յառաջ կուզայ թէ՛ դրամի և թէ՛ ժամանակի մասին :

Այսու ամենայնիւ, վարչութեան անկ է հրահանգ տալ տղային այլ և այլ մարմնոց որպէս զի կըբռնին հետ իրենց ունեցած գրութեան յարաբերութիւնք որոշ և միօրինակ ձևի մը վերածեն :

3.

Դիտողութիւնք ՚ի վերայ անտիպ տեսնալ գրութեանց շրջանի 1883 ամի.

ՉՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՅ. — Երկրայ շրջանի ատենագրութիւնք թէ՛ պէտ կանոնաւորապէս կը հրատարակուին, սակայն հարկ է գիտնալ որ նախորդ 83 ի շրջանէն խել մը ատենագրութիւնք կան, ինչպէս նաև 1882 ի փակման՝ այսինքն ՉԱՅԻՆՆՈՐ օրք ց'արքանտիպ կը մնան : Այլ ըստ որում չէ կորելի զանոնք ատենքն մասին սուղ միջոցի մէջ տղագրել տալ, կ'առաջարկեմ որ նորք ևս նիստ ընդ մէջ հրատարակուին, որով կարենամք նոյն շրջանին մէջ տեղի ունեցած գործողութեանց և որոշմանց վերահասու լինիլ և զործել զի տակցութեամբ :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Զօպանեան էֆէնտիի յիշատակած անտիպ ատենագրութեանց հրատարակման գործն արդի Ղիւանիս յանձնուած լինելով, խօստացած եմք հետ դժետէ տպագրել տալ զանոնք, ինչպէս որ 1882 շրջանի վասիւ ման նիտիինն արդէն տպագրուած լինելով մինչև յառաջինայ նիտ պիտի բաշխուի երեսփոխանաց : Սակայն այդ ձեռագիր ատենագրութեանց մէջ կան մի քանիներ ալ, որք դժնիակ նիտի կը վերաբերին և հետևաբար 'ի դէպ ժամու միացն կրնան հրատարակուիլ :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Յաւալի պարագայ մ'է արդարև որ նախորդ Ղիւանի գործերն այսպէս երեսի վրայ կը մնան, իբրև թէ նա տարբեր մարմին մը եղած լինէր :

**ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ.** — (Ատենագրիչի նախարդ Ղիւանի) Ես իբրև նախորդ Ղիւանի Ատենագրիչի, այդ ատենագրութեանց պատասխանատուութիւնն թողած եմ արդի Ղիւանին, որպէս յայտարարած եմ ասիկց յառաջ ևս : Եւ կարծեմ թէ նոր Ղիւաններն պարտաւոր են իրենց նախորդաց կիսաւարտ գործերն իրենք ստանձնել :

Զայս յայտարարելէ յետոյ, կ'առաջարկեմ որ, եթէ ոչ տան և հինգ օրն, գէթ ամիսն մի անշամ այդ անտիպ ատենագրութիւններէն մէկ մէկ հատ հրատարակուին, նոյնպէս և խմբագրուին անպատրաստ ատենագրութիւնք :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Այդ պարտքը ձերն է, և գիտեմ թէ դեռ կան ութը տասը չը խմբագրուած ատենագրութիւնք :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ղաղարտեան ֆրիստոսուր էֆէնտի, իբր նախորդ Ղիւանի Ատենագրիչի ցաւ կը յայտնէ թէ՛ արդի Ղիւանըն փոյթ չ'տանիր նախորդ շրջանի ատենագրութեանց հրատարակման մասին : Սակայն

խնդրոյն մէջ կայ թ իբրևուցութիւն մը՝ որ կրնայ այժմ խի պարզուիլ երկու խօսքով :

Գիտէք արդէն թէ՛ անցեալ շրջանի ատենագրութիւններէն մինչ 8 րդ ն հրատարակուած է. արդ կը հարցնեմ Ղաղարտեան էֆի թէ՛ 9, 10 և 11 րդք ևս ամբողջ խմբագրեալ և Ատենագրիչի էֆէնտիէ սրբագրեալ իբր անցուած յանձնուած են :

**ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ.** — Այդ նիտերուն ձեռագիրներն ևս նայած և ստորագրած եմ :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — (Պատասխանելով) Այո՛, իմ քովս են :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Այդ ուրեմն ինչո՞ւ չ'բարեհաճեցաք զանոնք յանձնել Ղիւանիս առ 'ի տպագրութիւն, փոխանակ այժմ ելնել ցաւ յայտնելու :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Մենք պարտաւոր չենք մեր պաշտօնավարութեան ատենագրութեանց ձեռագրերն յանձնել արդի Մարտի-Ղիւանին : Երբ Տնտեսական Խորհուրդն կը վճարէ անոնց տպագրական ծախսքն, կը յանձնեմք տպարանին, զի մեզ կը վերաբերի նոյն ատենագրութեանց փորձերն և սրբագրութիւններն նայել :

**ԶՐՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ.** — (Իբր անգամ ճնտես. Խորհրդով) Տնտեսական Խորհուրդն կանոնաւորապէս կը վճարէ Ղաղարտեան ծրարից յասակացեալ որոչ գումարն :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Ուրեմն այդ գումարէն պէտք է բաժին հասնել Հին ատենագրութեանց տպագրմանն համար ալ :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Նոյն խի Ղաղարտեան

եան էֆէնտի իւր վերջի յայտարարութեամբ  
րայարձակագլխ հաստատեց թէ անցեալ շրջանի  
ատենագրութեանց տպագրութեան յապազման  
պատճառն տղիք Գիւսան չէ, հակառակ ՚ի սկզբան  
իւր քրտած գիտողութեանց :

Ասկից զատ, նախորդ Գիւսանի Ատենապետ  
էֆէնտին կը սխալի, կարծեւով թէ անցեալ  
շրջանի ատենագրութեանց տպագրութեան  
հոգն իրենց կը վերարբերի, զի կը յիշէք  
անչուտ՝ թէ ըստ որդման Ժողովոյդ՝ Գիւսանը  
ինքն ստանձնած է այդ ատենագրութեանց  
տպագրութեան գործն, ինչպէս և պահ մը  
յառաջ յայտարարեց Գուրգէն էֆէնտի :

Ուրեմն նախորդին պարտքն է միմիայն, զուտ  
նոնք խմբագրել, ստորագրել և մեզ յանձնել :  
Երբ յանձնուին, կը տպագրուին, եթէ ոչ,  
չեն տպագրուիր և դժբաղդաբար զմեզ կը  
պարտաւորեն ջուռ յայտնել այսպիսի անհիմն  
գիտողութեանց համար :

ՅՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՏ. — Շատ ճիշտ են Ատենապետ  
էֆէնտի յայտարարութիւնքն :

4.

Երագիր Նիկողոս Էֆենտի Թիւլլիցնոսեանի  
յաղագս ատենագրական դիտողութեանց.

Ատենապետ էֆէնտի Ժողովին կը հաղորդէ  
Թիւլլիցնոսեան Նիկողոս էֆէնտի կողմանէ  
ներկայացեալ հետեւեալ ծրարդին :

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Աղգ. Երեսի. Ընդհ. Ժողովոյ.

Նկատելով որ Աղգ. Ժողովոյս իւրաքանչիւր նստին յատկացեալ տևողութեան  
ժամանակէն մեծ և կարևոր մաս մը՝ յաճախ  
ատենական գործողութեանց կարգին մէջ՝  
նախընթաց նստի ատենա-

գրութեան վրայօք Պատուարժան երեսփոխանաց  
չատին գրեթէ անպակաս ունեցած  
դիտողութեանց յայտարարութեամբն ու  
ընթացողութեանց սպառնալու և յուժեղ  
վատնուելու վրայ է, միմիայն ժամանակի  
խնայողութեան նախանձանդիր ոգևոյլ,  
կ'համարձակիմ առաջարկել Պատկառելի  
Ժողովոյս՝ Ատենական Կանոնագրութեան  
18րդ. Յօդուածոյն վրայ յաւելուլ յետագայ  
յօդուածներն ևս, որք են՝

Յօդ. Ա. — Նախընթաց նստի տրակալ  
Ատենագրութեան վրայ դիտողութիւն  
ունեցող երեսփոխանք իւրեանց դիտողութիւններն՝  
փոխանակ յատենի ընթեանոյ՝ պարտին  
գրաւոր կերպիւ յանձնել Մայր-Գիւսանի  
Ատենապետին, ատենական գործողութեանց  
սկսելէ առաջ :

Յօդ. Բ. — Ատենապետը դիտողագիր  
յանձնող երեսփոխանաց թիւը և անունները  
յատենի Ժողովոյ յայտարարելէ յետոյ  
կ'յանձնէ զայնս Ատենագրութեանը՝  
նոյն Ժողովոյ նստին Ատենագրութեանը՝  
ատենական գործողութեանց կարգին  
մէջ ՚ի միասին արձանագրուելու և  
հրատարակելու համար :

Յօդ. Գ. — Եթէ երեսփոխանի մը յանձնած  
դիտողագրոյն մէջ գտնուին այնպիսի  
պարբերութիւնք, որք Ատենագրութեան  
մէջի իւր խօսքերն միայն ուղղելու կամ  
սրբագրելու հանգամանքը չը կրեն,  
և կամ ուրիշ երեսփոխանի մը վերագրեալ  
խօսքերն ուղղելու ծառայեն, Մայր-Գիւսանի  
իրաւունք ունի այդպիսի պարբերութիւններն  
արտաքս թողուլ հրատարակութենէ և  
յաջորդ նստին եթէ հարկը պահանջէ՝

այդ մասին պէտք եղած բացատրութիւնը տալ ժողովոյս, որ երկուստեք միանգամ տրուած բացատրութիւններն լըսելէ յետոյ՝ առանց վէճի ձեռամբարձով կ'այայ իւր վիճիւր :

Հաւաստի եմ որ Ազգ. ժողովն զընահատելով սոյն առաջարկութեանս կարեորութիւնն ու ստիպողութիւնն, կը բարեհաճի հարկ եղած ելքը տալ այսմ :

Ազգային երեսփոխան  
Ն. Թիւրքեմանեան

14 Սեպ. 1884

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Սոյն ծրագրին վրայ երեսփոխանը կրնան թեր ու դէմ՝ խօսք առնուլ մի անգամ միայն :

ՅՕՊԱՆԵՆԱՆ Մ. ԷՅ. — Կ'առաջարկեմ նախալճուով մերժել այդ ծրագիրն :

ԳՈՐԻԳԻՆ Յ. ԷՅ. — Կը կրկնեմ : Վասն զի եթէ մէկ կողմանէ ժողովոյս ժամերն իւրնայել կ'առաջարկուի, միւս կողմանէ ևս, այդ ծրագրի դործադրութեամբ՝ այն տեսակ անվերջանալի դիտողութեանց և վիճարանութեանց դռներ պիտի բացուին, որոց համար ոչ թէ՛ ժամեր՝ այլ նիստ մ' իսկ անբուական պիտի ըլլայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Քանի որ ոմանք յ'երեսփոխանաց նախալճիս կ'առաջարկեն, նախ հարկ է Գիւանիս՝ նախալճուով մերժման կամ ընդունելութեան սկզբունքն բուխարիել :

ՅԱՆԱԶԱՆ ՆՍՏԱՐԱՆԵՐԷ — Այո՛, նախ սկզբունքը պէտք է բուէի զնել :

Հետեւաբար բուէարկութիւն կատարուելով, ժողովն 2 ի դէմ 15 բուէով կ'ընդունի

ներկայացեալ ծրագրին նախալճուով մերժման կամ ընդունելութեան սկզբունքն :

ԹԻՒՂԵՆՏՅԵԱՆ Ն. ԷՅ. — Երեսփոխանի մը կողմանէ ներկայացեալ որ և է որինս կան ծրագիր կամ առաջարկ, եթէ մերժել իսկ հարկ լինի, այդ մերժումն պէտք է նախաքննիչ Գիւանի մը կողմանէ դոյս պատճառաբանեալ տեղեկագրով մը, որպէս կը տրամարէ մեր ներքին Կանոնադրի 61-րդ յօդուածըն : (Ստենաբանը կընթեռնու զայն) :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Սակայն Թիւրքեմանեան էֆէնտի պարտի նկատողութեան առնուլ նաև նոյն Կանոնադրի 31-րդ յօդուածոյն հրաւանգն (որ Ատենապետ էֆէնտի կարգալէն ետքը) : Ըսել է թէ ժողովն ամեն պարագայի մէջ կարող է ու է առաջարկ կամ ծրագիր ստակ նախալճուով մը մերժել կամ ընդունիլ : Սրէնքն բացորոշ է այս մասին :

ԹԻՒՂԵՆՏՅԵԱՆ Ն. ԷՅ. — Քանի որ այդպէս է, Ատենապետ էֆէնտի, կը հարցունեմ թէ՛ իմ ներկայացուցած ծրագիրս ատոնցմէ որո՞ն հանգամանքը կը կրէ, զի նախ խնդիրն պէտք է ճշդել :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅ. — Արդէն այդ լընչը զիրն այս ժողովոյս մէջ բանիցս յուզուած և մերժուած է :

(Զանազան նստարաններէ հաւանութեան ցոյցեր) .

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Թիւրքեմանեան էֆէնտի կողմանէ ներկայացեալ ծրագիրն բոլորովին կը հակառակի մեր ներքին Կանոնադրի 18-րդ յօդուածոյն՝ որ կը տրամադրէ թէ՛ ատենադրութեանց վրայ դիտողութիւնը յատենի ժողովոյ պարտին տեղի ունենալ :

Ասկից զատ, եթէ ըստ սուհանջման ծրագրի հեղինակին՝ իւր առաջարկն յղեմք ձեռնհաս Գիւանին, նա ևս ընականաբար մեր ժամ պիտի առաջարկէ՝ հետեւաբար քանի որ արդիւնքն մի և նոյն պիտի ըլլայ, լաւ է բնաւ չ'յղել և այժմէն մերժել զայն նախալճաով :

**ԱՍՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Երեք երեսիոխանք յաջորդաբար կ'առաջարկեն մերժել զայս ծրագրի նախալճաով, եթէ 'ի նպատտ խօսք ուղղ չ'կայ, խնդրին քուէի պիտի զնեմ :

**ԹԻՒԼՊԵՆՏՅԱՆ Ն. ԷՖ.** — Ատենապետ էֆէնտի, եթէ նախալճաով որոշում պիտի տրուի, նախ հարկ է Օրակարգն անցնել լաւն զիրն :

**ՋԱՅՆԵՐ** — Օրակարգն չ'կրնա՞ր անցնել :

**ԱՍՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կը տեսնեմ թէ հարկ կ'ըլլայ մի անգամ ևս պարզել Ձեզ խնդրոյն վիճակն, որպէս զի մի գուցէ շիտթութեանց տեղի տրուի :

Ժողովն պահ մ'առաջ խնդիրն նախալճաով մերժելու կամ ընդունելու սկզբունքն քուէարկեց, և ապա հետզհետէ խօսք առնելով Չօպանեան, Գուրգէն և Ղազարոսեան էֆէնտիք, մերժում առաջարկեցին և ոչ ոք հակառակ չեւտեցաւ, հետեւաբար հարկ կ'ըլլայ քուէի զնեմ խնդիրն : Իսկ Թիւլպէնտճեան էֆէնտի, իբրև առաջարկութեան տէր՝ ազատ է խօսք առնուլ և համոզել զերեսիոխանս :

**ԹԻՒԼՊԵՆՏՅԱՆ Ն. ԷՖ.** — Ժողովոյ ատենական զործորութեանց ժամերն կորզել չեմ ուզեր : Եթէ կուզէք որ խօսիմ, նախ խնդրին Օրակարգն անցուցէք :

**ՋԱՅՆԵՐ** — Քուէ, քուէ, ալ բուսական է :

( Աղմուկ )

**ԱՍՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կը տեսնէք ահա թէ Գիւանս պատրաստ է խօսք տալ Թիւլպէնտճեան էֆէնտիի որ չ'ուզեր խօսիլ, ուրեմն քուէի կը զնեմ նախ իւր ծրագրին ընդունելութիւնն և ապա մերժումը :

**ԹԻՒԼՊԵՆՏՅԱՆ Ն. ԷՖ.** — Եթէ պարզ քուէարկութեամբ մը խնդիրն վստիչք, Ատենապետ էֆէնտի, չարաչար գործածած պիտի լինիք մեր ներքին Կանոնադրի տրամադրութիւնքն :

Հաճեցէք արձանագրել տալ իմ այս զիտողութիւնքս :

**ԱՍՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — ( Առ Թիւլպէնտճեան էֆէնտի ) Կ'արձանագրուին :

Չայս ասելով, Ատենապետ էֆէնտի Ժողովոյ քուէին կ'ենթարկէ Թիւլպէնտճեան Նիկողոս էֆէնտիի կողմանէ ներկայացեալ ծրագիրն, որ ՆԱԽԱՎ.ՃՈՌՈՎ, ԿԸ ՄԵՐԺԵ ԶԻ ՂԷՄ 13 քուէով :

Սոյն քուէարկութեան մէջ ձեռնպահ կը մնան 13 երեսիոխանք :

3.

Հարցումն Սուրբեհան Ա. էֆէնտիի 'ի մասին Մնահեան ժառանգութեան և Բերայի հիկիզիլոց հաշուական խնդրոց.

Ատենապետ էֆէնտի նոյնպէս Ժողովին կը ներկայէ Սուրբեհան Աւետիս էֆէնտիի կողմանէ եկած հետեւեալ հարցադիրն :

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի Ազգային Ժողովոյ

Ա. Տարի մ'առաջ Ազգ. Ժողովոյ կողմանէ Կերպրոնական Վարչութեան ուղղեալ որոշման մը համեմատ՝ սոյն վեր-

ջինը պիտի քննէր Մնակեան ժառանգութեան ինքորոյն առթիւ Պատրիարքարանի մէջ գործածուած զեղծմանց քննութիւնը. այդ քննութեան արդիւնքը ց'արդ ժողովոյս մատուցուած չ'ըլլալուն, կը խնդրեմ որ Ազգ. Վարչութիւնը բացատրէ այս յատպարման պատճառները :

Բ. Նոյնպէս անցեալ տարւոյ նստաշրջանին մէջ Ազգ. ժողովը որոշած էր Բերայի հրկիզելոց հաշին, իբրև Ազգ. պատասխանառութեան պատկան՝ պահանջել Նորատունկեան Վսեմ. Յակոբ էֆէնտիէն : Կը խնդրեմ որ Կեդր. Վարչութիւնը տեղեկացնէ ժողովոյս այս մասին տեղի ունեցած անցքերը :

Ազգ. երեսփոխան  
Ա. Ա. Սուրենեան

14 Սեպտեմբեր 1884

(Յեռ քննեցեալ)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սոյն պարզ հարցազիրն ըստ օրինի կը յղուի առ Ազգային Վարչութիւն 'ի տեղեկագրութիւն :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Յղում չ'եմ քնդունիր, Ատենապետ էֆէնտի, այլ միայն Վարչութեան ներկայ անդամներէն այս մասին բացատրութիւն կը խնդրեմ, որ եթէ չ'հաճին տալ, ես իբրև հարցման հեղինակ, խօսք պիտի առնուի :

ԳՐԼԸՃՃԵԱՆ Գ. ԷՖ. — (Անդամ Բաղ. ժողովոյ) Կ'առաջարկեմ որ Վարչութեան յղուի այդ գիրն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սուրենեան էֆէնտի կ'ըսէ թէ՛ թող Վարչութիւնն հաճի այժմ բացատրութիւն տալ. բայց հարկ է գիտնալ

թէ՛ նա, ըստ խորհրդարանական սովորութեան աղատ է առ ինքն ուղղեալ հարցման մը անմիջապէս չ'պատասխանելու :

Ասկից ի զատ, սովորութիւն է որ, երեսփոխան մը իւր ներկայացուցիչը հարցման նիւթը կանխաւ կը հարորդէ գործադիր իշխանութեան, որպէս զի սա ես 'ի հարկին պատրաստ ըլլայ անմիջապէս պատասխանելու :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Բայց ըստ խորհրդարանական սովորութեան, Վարչութիւնն ալ պարտի իւր կողմանէ ներկայացուցիչներուն նախ չ'ուս :

Տ. Վ. ՎՐԴ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ — Վարչութեան կրօնական ժողովն ներկայ է :

ՍՈՒՐԷՆԵԱՆ Ա. ԷՖ. — Իմ ներկայացուցած խնդիրս կրօնական ժողովոյ չ'պատկանիր, այլ Քաղաքական ժողովին :

ՋԱՆԱԶԱՆ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ — Յղում, յղում :

Յամենուտ երեսփոխանը յղում առաջարկելով, Ատենապետ էֆէնտի ժողովոյ բուէին կը դիմէ, որ ԿՈՐՈՇԷ Սուրենեան էֆէնտիի կողմանէ ներկայացեալ սոյն կրկին հարցադրերն յղէ պարզապէս առ Վարչութիւն :

Սոյն բուէարկութեան մէջ ձեռնպահ կը մնան երկու երեսփոխանը :

6.

Ջեկուցագիր Թաղեոս Էֆենտի Պեկեանի ի մասին երեսփոխանութեան իւրոյ .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Որպէս գիտէ ժողովը՝

Պէկեան Թարգնոս էֆէնտի ասից մէկ ու կէս տարի առաջ Սամաթիոյ Եէնի-Մահալէ Թահէն երեսփոխան ընտրուած և իւր յանձնառագիրն Վարչութեան միջոցաւ զրկած էր Կիւանիս, որ ց'արդ անվաւեր կը մնայ :

Այժմ յիշեալն հետեւել զբով կուգայ յետս կոչել իւր նախորդ յանձնառագիրն :

**Վսեմ. Ատենապետ Աղգ. Ժողովոյ**

Տարի ու կէս առաջ Սամաթիոյ Նոր-Թաղին կողմանէ երեսփոխան ընտրուելով, ըստ օրինի յղեցի զիմ յանձնառագիրը Ընտր. Ժողովոյ. զի ներէր յայնժամ ժամանակս վարել զնոյն պաշտօն :

Բայց այժմ ո՛չ ժամանակս և ո՛չ պարագայք չի ներելով ինձ վարել Աղգային երեսփոխանութեան պաշտօն, յետըս կոչեմ զիմ յանձնառագիր :

Ուստի կը խնդրեմ, Վսեմ. Ատենապետ, որ հաճիք հաղորդել զայս Աղգային Պատկառելի Ժողովոյ, որպէս զի իմ երեսփոխանական ընտրութիւնն տակաւին չվաւերացուած, բարեհաճի հրաւիրել Նոր-Թաղի ընտրողներն ուրիշ երեսփոխան մ'ընտրելու :

Մնամ յարգանքօք

Զերդ Վսեմ. Ամենախոնարհ ծառայ  
Թ. Պէկ.

14 Սեպտեմբեր 1884  
Բերա

(Յե՛ր Ը՛նթեցո՛ւն)

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Նկատելով որ արգէն մեր այս աւուր Օրակարգին մէջ կը գըտնուի Պէկեան էֆէնտի երեսփոխանութեան խնդիրն, կ'առաջարկեմ և այդ զիրն վերապահել նոյն Օրակարգին :

Տ. Վ. ՎՐԻՍ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ — Ես ալ կ'առաջարկեմ որ այժմ խի նկատողութեան առնելով զայն, խնդիրն վերջանայ :

ԶԵՐԱՋ Մ. ԷՖ. — Երկու տարբեր առաջարկներ ներկայացան, մին՝ Գուրգէն էֆէնտի կողմանէ, որ կ'առաջարկէ Օրակարգին վերապահել այդ զիրն, և մյուսն՝ Ի Տէր Վահան Վարդապետէն, որ կուզէ այժմէն խի գոհել խնդիրն, առանց արասելու Օրակարգին :

Ուստի, ըստ իս, Ժողովոյ աւելի օրինաւորապէս շարժած կ'ըլլայ եթէ նախ այդ երկու տարբեր առաջարկներն քուէի դնէ :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Բայց այժմէն քուէարկութիւն կատարել ուզելն՝ զՊէկեան էֆէնտի իրև երեսփոխան ընտրուելի կը նշանակէ, որ սխալ է : Ուստի ես ևս կը ձայնակցիմ Գուրգէն էֆէնտի առաջարկութեան :

ՊՈՒԼԿՈՒՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Քանի որ Պէկեան էֆէնտի ց'արդ իր երեսփոխան ձանցըուած չ'է այս Ժողովս, իւր այդ նամակն ոչ թէ խնդիր ընել, այլ նկատողութեան խի առնուլ արժան չ'է :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Շատ իրաւացի է Պուլկուրեան էֆէնտի գիտողութիւնն :

ԶԱՅՆԵՐ — Բու՛լ, քու՛ն :

Փոխանակեալ այն կարծեաց վրայ, Ատենապետ էֆէնտի Ժողովոյ քուէին կը զիմէ, որ համաձայն Գուրգէն էֆէնտի կողմանէ ներկայացեալ առաջարկութեան, ԿՈՐՈՇԷ այն զիրն վերապահել Օրակարգի ԳՐ խնդրոյն :

7.

Հաղուեցոյց 1883-84 ամի Ե. Եմմուացոյ 1884-85 ամի Ս. Արոտոյն երասարկմայ.

Երեսփոխան Ս. Արոտոյն 1883-84 ամի

Հաշուեցոյցն և 1884—85 ի Ելմտացոյցն հանդերձ Վարչական և այլ պաշտօնադրերով Գլխանին առանդուած լինելով, ըստ օրինի ԿՌՌՇՈՒԻ յղել զայնս Կարուածոց և Համարակալութեան Խառն Գլխանաց ՚ի նախարանու թիւն :

Բ.

Շարունակութիւն վիճաբանութեան ի վերայ առաջնորդական խնդրոյ .

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ատենական զօրժողութիւնք աւարտեցան և կանցիբի Օրակարգի Բ ԸՐ խնդրոյն :

Նախորդ նիստէն առաջին խօսքը Ղազարոսեան Քրիստոստուր Էֆէնտիինն է, ուստի կը հրաւիրեմ զինքն ՚ի բեմ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Բեմն ելնելով) Վերջընթեր նստին մէջ առաջնորդական խընդրոյն առթիւ արդէն յայտնած եմ իմ կարծիքըս, որ է՛ մերժելով Վարչութեան առաջարկութիւնն, ընդունիլ Նախաձեռնութեան Գլխանի տեղեկագրին եղբակացութիւնը :

Այժմ խօսք առած եմ պատասխանելու համար ինչ ինչ զիտողութեանց որք տեղի ունեցան երեսփոխանաց ոմանց կողմանէ : — Նախ կ'առարկուի թէ շատ տեղեր զաւառացիք չեն կարող սահմանադրապէս ժողով գումարել իրենց սակաւաթուութեան պատճառաւ : Անհիմն է այս առարկութիւն, վասն զի Քաւառական ժողովներն առ առաւելն 70 և առ նուազն 14 անդամէ կրնան բաղկանալ . . . :

Տ. Վ. ՎՐԴ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ — (Ընդմիջմամբ) Սխալ է ձեր ըստն . 14 թիւ չկրնար ըլլալ, այլ առ նուազն պէտք է 21 լինի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Դիտնցին դառնալով) Ատենակալեա էֆէնտի, հաճեցէք հրաւիրել զՎահան վարդապետ որ չ'ընդմիջէ զիս :

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրինական ընդմիջումներ նոյն իսկ առենարանին կողմանէ անուշադրութեամբ եղած սխալ մը ուղղելու թէ՛ պէտ կը ծառայեն երբեմն, այսու ամենայնիւ կը հրաւիրեմ զՏէր Վահան Վարդապետ, որ փոխանակ ընդմիջմամբ ուղղելու, խօսք առնու և այնպէս չ'երբէ՛ առենարանին կարծիքը Այժմ շարունակեցէք Ղազարոսեան էֆ.

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Շարունակով) Կըսէի թէ Քաւառական ժողովներն մինչև 14 անձանցմէ կրնան բաղկանալ և ըստ Սահմանադրութեան ընտրել իրենց Քաւառական, Քաղաքական և այլ ժողովներն : Զոր օրինակ, Պաշտատեղիք որք զուրկ լինելով այս ժողովներէն, անցեալներն երեսփոխանական ընտրութիւն կատարելու զժուարութիւն ունեցան, զիմեցին Վեդրոնիս, որ ըսաւ թէ՛ «ամեննիւք միայեք, ընտրեցէք Զեր Երեսփոխանն, բաւական է որ ձեր բուէնով լինէ յ :

Հայաստանեաց Առաքելական Եկեղեցւոյ դարաւոր օրէնքներն առաջնորդին ընտրութեան իրաւունքը ժողովուրդին վերապահած են, և ինչպէս Պատրիարքն ժողովուրդեան ներկայացուցիչն եղողաց Ազգ. ժողովէս կընտրուի մեր յորմած և առատագութ Վեհ. Կայսեր թոյլտուութեամբ և շնորհւն, և առանց ունէ միջամտութեան, նոյնպէս և առաջնորդք պէտք է Քաւառական Ընդհանուր ժողովներէն ընտրուին առանց Կեդրոնիս միջամտութեան : Արդարև կան Եկեղեցիներ, յորս Եկեղեցւոյ զուխն ինր կը կարգէ առաջնորդները, բայց փա՛ռք Աստուծոյ, Հայաստանեաց Առաքելական Եկեղեցին այդ տեսակ բռնութեան տակ չ'է՛ մտած և չ'ունենէր : Նոյն իսկ Առաքելոց ժամանակ՝ Մաթաթիոսի ընտրութեան առթիւ՝ ժողովուրդն էր որ երկու հօգի ներկայացուց. ինչպէս և դարձեալ ժողովուրդն էր որ 7 անուն ներկայացուց առաքելոց և Պետրոս առաքելաւ միայն ձեռք դրաւ անոնց վրայ : Ուրեմն կը տեսնէք թէ՛ Հայաստանեաց Եկեղեցին՝ իբրև Առաքելական Ս. Եկեղեցի. ընտրութեանց ի-

բաւունքն ժողովուրդին թողած է ոչ թէ Սահմանադրութեան թուականէն, այլ նոյն իսկ աւարելոց ժամանակէն սկսեալ:

Կոտարիտի նաև թէ՛ եթէ առաջնորդը Կեդրոնէան ընտրուին, ասոնց ծախքն ալ Կենդրոնական Սնտուկէն հոգալ հարկ պիտի լինի. բայց այդ խնդիրն երկրորդական է: զի ո՛վ ալ վճարէ ծախքն, ընտրութեան իրաւունքը միշտ գաւառացիինն է. սկզբունքներն դրամով չ'են վաճառուիր:

Փակեալ ցանկ զրկելու մասին ևս տարբեր առաջարկ մ'եկաւ Փափաղեան էֆէնտիի կողմանէ. ասի ալ գաւառացի ժողովրդեան ընտրական իրաւանց իբր բռնաբարում կը նկատեմ, վասն զի ինչպէս որ Պատրիարքական ընտրութեանց մէջ Տէրութիւնն ցանկ զրկելու սովորութիւն չունի, որ մեծ ապացոյց մ'է Հայոց ազգին իրաւանց մէջ ունեցած անկասխտութեան սրահայնման, նոյնպէս և Կեդրոնական Վարչութիւնն առաջնորդական ընտրութեանց առնես փակեալ ցանկ զրկելու դրութեանն պէտք է հրաժարի, զի ինչ որ է Բ. Կուռն Պատրիարքարանի համար, նոյնն է և Պատրիարքարանն գաւառաց համար:

Երբ Կաթողիկոսական ընտրութեան ժամանակ, Ռուսիոյ Կայսրը կըսէ թէ՛ երկու ընտրելէաց մին որոշելու իրաւունքն իմն է, աշխարհիս առնես կողմի Հայերն կ'սկսին բողոք բռնեալ թէ՛ իրենց ընտրական իրաւունքն կը բռնաբարուի. հայոս մեր բրածն ինչ պիտի լինի, երբ ընդունիմք Վարչութեան առաջարկն: Չ'եմ կրնար ըսել թէ՛ գաւառացիին երբեմն չ'սխալիր իւր ընտրութեան մէջ, բայց ասի պատճառ մը չէ զիներն զրկելու և միթէ մենք ալ չէ՞նք սխալած շատ անգամ. . . .

Տ. Վ. ՎԱՐԻ Ց. ՄԻՆԱՍԵԱՆ — [Վերստիմընդի իջելով] Մի մտնէք այդ տեսակ խնդրոց մէջ և սխալ հետեւութիւններ հանէք:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — (Պատասխանելով) Եթէ սխալ է, ուղղեցէ՛ր: (Կը շարունակէ) Պատրիարքարանի սարտըն է՛ գաւառական

քործոց վերին հսկողութիւնն ընել և հսկել Սահմանադրութեան անխելի դործադրութեան Կ. գաւառս: Չ'եմ գիտեր թէ Վարչութիւնն ինչո՞ւ կուզէ միջամտել այս տեսակ իրաւասութեան խնդրոց մէջ. մի՞թէ խնդիրներ կը պակսին իրեն:

Կրնայ ըլլալ որ ժողովոյս մեծամասնութիւնն հակի այս առաջարկի ընդունելութեան, բայց ես ընդ միշտ կը մերժեմ զայն ընդունելով Նախածեռնութեան Դիւանի առաջարկն, զի հակառակ կը գտնեմ Սահմանադրութեան և Հայաստանեաց Սուրբ և առաքելական Եկեղեցոյ սկզբանց:

Մենք ազատ Եկեղեցոյ մէջ ծնած եմք, որ ո՛չ աստուածպետական և ո՛չ ալ բռնապետական եկեղեցոյ դրութեամբ կը կառավարուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Խօսքն թիւլլէնտճեան էֆէնտիինն է:

ԳՈՒՐԳԷՆ Ց. ԷՑ. — Կուզէիմք գիտնալ թէ թիւլլէնտճեան էֆէնտի թե՛ր պիտի խօսի թէ՛ դէմ:

ԹԻՒԼՊԷՆՏՃԵԱՆ Ն. ԷՑ. — Խօսք եմ առած և պիտի խօսիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Գուրգէն էֆէնտիի կողմանէ եղած սոյն հարցումը պէտք չէ զՁեզ վիրաւորէ, թիւլլէնտճեան էֆէնտի. վասնզի օրէնն է որ թեր խօսողէ մը անմիջապէս վերջ միշտ դէմ խօսող մը զայ: Ուստի հանցեք յայտնել թէ Կ. նպաստ թէ՛ ընդդէմ խօսիլ կուզէք:

ԹԻՒԼՊԷՆՏՃԵԱՆ Ն. ԷՑ. — (Բեմն ելնելով) Ես ոչ թեր և ոչ դէմ կուզեմ խօսիլ, այլ պարզ բարեփոխում մը պիտի առաջարկեմ:—Տեաքք Երեսփոխանք, այս խնդիրն բուսականէն առնի երկրորեցաւ. երբ խնդիր մը իւր պարզութիւնը կը կորսնցուծէ, կը ճապարղի և քանականարար լուծումն ալ կը դժգոսանայ. այսպէս եղաւ և այս խնդրոյս համար որ երեք նիստեր գրաւեց, բայց կը յուսամ և կը փափաքիմ որ այսօր իւր վերջնական լուծումը գտնէ:

Այս խնդիրն մեզ ներկայացաւ Վարչութեան մէջ ծրագրովն յորում կը տըր թէ՛ «Նկատելով որ առաջնորդական վիճակը այլ և այլ « պատճառներով առանց հոգեւոր հովուի կը « մնան, խառն ժողովն այս պարագայից առ « ջըւ ստիպուած է այն ամեն հայաբնակ գաւառացայ մէջ որք առաջնորդ չունին, և ըստ « տրամադրութեան Ազգային Սահմանադրութեան՝ առաջնորդի ընտրութիւն կատարելու « դիւրութիւն չ'կայ, Ազգային Պատրիարքանի « կողմանէ՛ առաջնորդ կարգել իրբև առժամ « եայ բացառիկ տնօրինութիւն և այլն »: Այս օրինական ծրագիր բնականաբար պէտք էր յղել Նախաձեռնութեան զիւանին . . .

**ԹԻՒՂԵՆՏՅԱՆ ԵՒ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ ԷՖ. Բ. —** (Ընդմիջելով) Արդէն յղուած է Նախաձեռնութեան Դիւանին, որ իւր կրկին տեղեկագրերով մեր ծում առաջարկած է :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. —** Կը խնդրեմ որ չընդ միջէք Ատենաբանը :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ ԷՖ. —** Բայց կը տեսնէք թէ՛ խնդրոյն անյեւալ վիճակին վրայ տեղեկութիւն չունի :

**ԹԻՒՂԵՆՏՅԱՆ Ն. ԷՖ. —** (Շարունակելով) Կըսէի թէ՛ բնականաբար պէտք էր յղել Նախաձեռնութեան Դիւանին որ բերելով իւր տեղեկագիրն մերժում կատարուէր : Մինչև հաս խնդիրն իւր պարզ վիճակին մէջն էր, և ահա ասիկայ անդին էր որ սխառ ճառագիւլ և Երեսօրիտանք ընդհանրապէս դէմ խօսելով վարչութեան առաջարկին, ըսին թէ՛ Նա այդ առաջարկն բերելու հարկադրեալ էր Կարնոյ, Մշոյ և Արարկիրի առաջնորդաց խնդիրներէն : Քանի մը տարիներէ ի վեր այս առաջնորդական խնդիրը ընդ մէջ Բ. Դրան և Ազգային Պատրիարքարանի կը տարուբերին Կերակ թէ՛ վարչութիւնն Բ. Դրանէն յուսա հատեալ . . .

**ԹԻՒՂԵՆՏՅԱՆ Ա. ԷՖ. —** Ձեռք ընդունիր այդ յուսանատեալ բանը :

**ԹԻՒՂԵՆՏՅԱՆ Ն. ԷՖ. —** (Շարունակելով) Այդ թախտը վիճակաց դարման տանելու խորհրդով՝ ընդհանուր առաջնորդական վիճակաց մասին բացառիկ տնօրէնութեան մը արտօնութիւնը կը խնդրէ ժողովն : Մինչդեռ ասելի լաւ կընէր, եթէ միմայն այդ երեք առաջնորդական վիճակաց խնդիրը բերէր ժողովն, և զմեզ ժամալաճառ չընէր Հիմնական սկզբանց խնդիրներով :

**ՍԸՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. —** (Ընդմիջումը) Իշմիրեան Սրբազան յայտարարեց թէ՛ մի միայն այդ երեք վիճակաց համար բերուած չէ՛ այս առաջարկն : Ուստի անտեղի կը նկատեմ այդ երեք գաւառաց վերաբերեալ տոյն առաջարկին նպատակակէտն :

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. —** (Առ Սըվաճեան էֆ.) Բայց խորէն Սրբազանի յայտարարութիւնն ալ պէտք չէ՛ մոռնալ :

(Ազմուկ եւ ընդմիջումը)

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. —** (Առ ընդմիջող) Ձեք այդ ընդմիջումներովն խնդիրն ասելի կը ճանս պաղի : Թողէք որ շարունակէ Ատենաբան է՛ Ֆէնտին :

**ԹԻՒՂԵՆՏՅԱՆ Ն. ԷՖ. —** (Առ ընդմիջող) Փոքր ինչ համբերեցէք և հիմայ իւրաքանչիւր 'ի ձէնջ իւր զիտողութեան պատասխանն մեկտնութեամբ պիտի գտնէ իմ տարու բացատրութեանցս մէջ :

Դիտել թէ՛ ինչ է պատճառն որով խընդիրներն այս աստիճան կը կեճոտին : Նոյն որ ժողովոյս ներկայանալի կարեւոր ծրագիրը կանխառ տպուելով երեսօրիտանաց չ'են ցըրուիր, և այսպէս այն առաջարկ որ մէկ նստի մէջ կը լսուի և վիճարանութեան կը դուրս սխալ որոշման մը կը տանի զմեզ շատ անգամ, զի չենք կրցած ուսումնասիրել խնդիրը

և վայրկենական տպաւորութեան ներքե կարծիք կը յայտնեմք : Այս մասին Փափաղեան էֆէնտի ժողովոյս վերջընթեր նստին մէջ շատ իրաւամբ ըրած է սա կանոնական դիտողութիւնն . «Երբ այս տեսակ պաշտօնագրեր կը ճերկիւցանան ժողովոյս , կրնայ ըլլա՞ որ մի և ճնոյն նիստին մէջ նկատողութեան չ'առնուին ճե մնան յաջորդ նստին . բայց լաւագոյն է «մի և նոյն նստի ատենագրութեան մէջ ար . «ձանագրել զանոնք , որպէս զի երեւոյթիսանք «կարենան կանխաւ ուսումնասիրել այդ պաշտօնագրերն : »

Իս չեմ մեղադրեր զՓափաղեան էֆէնտի վարչութեան առաջարկը սիւս չտակցած կամ մեկնած լինելուն համար , վասն զի մի անգամ ծրագրին առաջին ընթերցումը այդպիսի գաղափար մը տպաւորեք է իւր մտքին մէջ , ինչպէս նոյն ընթերցումը այլ օրինակ հասկացողութիւն մը կրնար տպաւորել ուրիշի մը մտքին մէջ , և ասի շատ բնական է :

Երկրորդ պատճառն այն է որ վարչութիւնն ստէպ պատիւ չ'ընէր ժողովոյս յատուկ ներկայացուցիչ մը զրկել որ , երբ իւր առաջարկներն թիւր մեկնութեանց տեղի կուտան , բացատրէ , ուղղէ , և գոնէ թոյլ չ'տայ որ խնդիրն իւր պարզութեանէն զուրս էնէ . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջմամբ) վարչութիւնն իւր ներկայացուցիչն ունի հաս :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ո՞ր է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կրօնական ժողովոյ Ատենագիր Տ. Վահան վարդապետն է , որ յայտարարած է թէ յանուն վարչութեան պիտի խօսի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Միթէ վահան վարդապետ յանուն վարչութեան այս ժողովոյս մէջ խօսելու արտօնութիւն առած է :

Տ. Վ. ՎՐԻ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ — Ես պաշտօն ընդունած եմ այսօր խօսիլ յանուն վարչութեան :

(Ձանգամ ցատարաններէ ցոյցեր)

ԹԻՒԼՊԵՆՏՅԵԱՆ Ն. ԷՖ. — (Շարունակելով) Թերևս վարչութիւնն այս նստին մէջ իւր ներկայացուցիչն ունենայ , բայց տարակրոյս չ'կայ թէ Ազգային ժողովոյ նիստերուն մեծ մասին մէջ վարչութիւնն իւր ներկայացուցիչն չ'է ունեցած : Արդարև Թրչ նիստին՝ Կրօնական ժողովոյ Ատենագետ Սրբազանն 'ի զիմաց վարչութեան՝ կը խօսի , բայց իւր բացատրութիւնքս աւելի խնդիրը ձապաղելու կը նպատենք քան թէ լուսարանելու : Խորէն Սրբազան ի՞նչ կըսէ . — «վարչութիւնը յիշեալ ծրագիրն բերելուն առաջին պատճառն է՝ «քանի մը ծանուցեալ վիճակներու քառամեայ «կընճխը , որով նոյն վիճակը իրենց առաջ . «նորդներէն զուրկ կը գտնուին , նոցա բացար . «ձակագլէս ակամայ բացակայութեամբը : »

Խորէն Սրբազանի այս խօսքերն անտարակոյս կ'ակնարկեն Կարնոյ , Արապկիրի , Տարօնոյ և վանայ առաջնորդական վիճակներուն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ. — Մենք կարեւորութիւն չ'տուինք տրուած այդ բացատրութեանց :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ի՞նչ ըսել է կարեւորութիւն չ'տուինք :

ԹԻՒԼՊԵՆՏՅԵԱՆ Ն. ԷՖ. — (Շարունակելով) Բայց մի անգամ տեսներք թէ այս տեսակ իմաստ մը կը պարունակէ վարչութեան օրինական ծրագիրն :

Ի՞տան ժողովը կըսէ . «Այս պարագայից «առջև ստիպուած է այն ամեն հայրանակ գաւառացի մէջ որք առաջնորդ չ'ունին . . . » : Արդ , կարե՞լի է ըսել թէ՛ Մուշ , կարին , Ա .

րապիրը և Վան առաջնորդ չ'ունին, բանի որ այդ վիճակներն տակաւին իրենց առաջնորդն ունեցող գաւառներ կ'նկատուին ցորդ: Վարչութեան ծրագիրը կը շարունակէ «Եւ ուր ըստ Թորամարտութեան Ազգային Սահմանադրութեան» առաջնորդի ընտրութիւն կատարելու զիրութիւն չ'կայ և զիրութեան ամեն միջոց կը պակսի տակաւին . . . » կարելի է ըսել թէ Վան, Մուշ, Կարին և Արապկիր զիրութիւն և միջոցներ չ'ունին:

Ըսել է թէ Վարչութիւնը իբրք և ցըրուեալ վիճակաց համար միայն առժամանակեայ դարման մը տնօրինել կ'առաջարկէ, և հետեւաբար աւելի իրաւացի է ըսել թէ՛ միայն Եղվիրեան Սրբազանի յայտարարութիւնք եղած են ճշմարիտ թարգման Վարչութեան իմաստին, յայտարարելով թէ՛ Վասալ են այն «ենթադրութիւնք և ակնարկութիւնք» որովք «ցոյց տալ կ'ուզեն թէ՛ Վարչութիւնն այս օրնադիր բերելով, կուզէ կեդրոնացնել իշխանութիւնը: Հարկ է գիտնալ թէ՛ Վարչութիւնն այս առաջարկ բերած է միմիայն այն սրբուեայ վիճակաց համար, ինչպէս Սիղան, «Իերջան ևն. . . » և թէ « . . . ըստեցաւ ճաւ և թէ՛ Վարչութեան այս առաջարկին ճաւն ոգին է բանի մը զիստոր գաւառաց առաջնորդական խնդրոյն լուծում տալ: Այս «ենթադրութիւնն ևս սխալ է, զի արդի Վարչութեան մէջ մեծ հոգածութիւն կայ առաջնորդական խնդրոյ մասին՝ որ ներկայացուած է Գատական Նախարարութեան և Կայսերական կառավարութիւնն ալ խօստացած է «կարգադրել զայն»:»

Այս Եղվիրեան Սրբազանի բացատրութիւն որ ամենէն ճշմարիտն է. ըսել է իբրք կամ երկրորդական վիճակաց համար է այս առաջարկն: Եւ Նախածեռնութեան Իրւանն կառաջարկէ մերժել զայս առաջարկ: Եթէ ներկայացեալ բանաձևին խօսքը չ'իմ ընդ, պատճառն այն է որ, բանաձևն կը համապատասխանէ Վարչութեան առաջարկին, և սորա

ուզած արտօնութիւններն իրեն տալ կ'իմտին՝ աննշան պայմանաւ մը:

Արդ կը մնայ միայն Վարչութեան առաջարկը և մէկ մ'ալ Նախաքննիչ Իրւանի տեղեկագիրն եզրակացութիւնը: Սոցա երկուքն ալ ըստ իս անբաւական են իրոր կամ ցըրուեալ վիճակաց իրական և գործնական դարման մը տանելու համար:

Վարչութեան առաջարկին Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ազգ. Սահմանադրութեան սկզբունց հակառակ և շատ մ'ալ զանազան անտեղութեանց առիթ և պատճառ լինելն ասպացուցանող իստքը և իրողութիւնք նախորդ նիստերու մէջ և նոյն իսկ բանաձևին հեղինակացը կողմանէ յառաջ բերուած, ինչպէս նաև Նախաքննիչ Իրւանի Պատ. Տեղեկագրերին նախընթաց յայտարարութեանցը մէջ բաւական մանրամասնօրէն բացատրուած ու յիշատակուած լինելով, հարկ չ'իմ համարք զայն վերակրկնել աստուտօր: Եր մնայ Նախածեռնութեան Իրւանի առաջարկը որ կը յանձնարարէ Վարչութեան համոզողական միջոցներ ՚ի գործ դնել այս վիճակաց Գաւառ, ժողովոյ մօտ իւրեանց առաջնորդներն ընտրելու:

Սակայն պէտք է նկատել թէ՛ որ Գաւառն որ առաջնորդ ընտրելու զիրութիւն և միջոց չունի, այդ գաւառն իւր պաշտօնական մարմիններն ալ ունենալէ զուրկ կ'գտնուի: Արդ այսպիսի գաւառ մը բանի որ չունի իւր պաշտօնական մարմիններն կամ Գաւառական Ժողովը, բնականաբար անհնար պիտի լինի Նախածեռնութեան Իրւանի կողմանէ առ Վարչութիւն յանձնարարեալ համոզողական միջոցներն ՚ի գործ դնել, զի չ'կայ անդ պաշտօնական մարմին որ ՚ի գործ դնէ: Հետեւաբար այսպիսի յանձնարարութիւն մը անիրական և անգործադրելի է այն օրինակ պարագայի մը մէջ: Երկրորդ՝ պէտք է գիտնալ թէ՛ որ գաւառն որ տակաւին իւր սահմանադրական կարգութիւնը չէ ստացած և առաջնորդ ընտրելու զիրութիւն չունի, այդ գաւառը

իրեն համար զատ առաջնորդ և առաջնորդա-  
րան պահելու և յանձնանձեղու ալ կարողու-  
թիւն և նիւթական միջոց ու հասցիք չունի :  
Ուստի այսպիսի վիճակի մը վրայ որ և իցէ ե-  
ղանակաւ եթէ առաջնորդ մ'ալ կարողուի,  
տարակոյս չ'կայ թէ՛ երկու ամիտ չ'տեսած՝  
նիւթական անձկութենէ տանջուելով պիտի  
ստիպուի Առաջնորդը կամ հեռանտուը կամ  
հրաժարական տայու, որով յիշեալ գաւառը  
պիտի ընկնի դարձեալ այն վիճակին մէջ ուր  
էր նախապէս :

Արդ քանի որ թէ՛ վարչութեան և թէ՛  
Նոխարածեռնութեան Գիւանի առաջարկած մի-  
ջոցք անբաւական են ըղձացեալ նպատակին  
հասնելու, բնականաբար հարկ կ'ըլլայ դատ-  
նել այնպիսի միջոց մը, եղանակ մը, որ թէ՛ Ե-  
կեղեցւոյ և Սահմանադրութեան հակառակ  
չ'լինի, և թէ՛ կորուկ ու գործնական լինի  
միանգամայն :

Ուստի ըստ իս աւելի բանաւոր կը լինի  
մձեռն թէ՛ որ գաւառը որ առաջնորդ ընտրե-  
լու ղիրութիւն չունի, վարչութիւնն անմի-  
ջապէս միացնէ զայն իւր մտակայ այն թեմին՝  
որու հետ որ աւելի յարմարութիւն և պատ-  
շաճութիւն ունի միասնուը :

Ահաւասիկ յարմարագոյն միջոց մը՝ որ թէ  
կորուկ ու գործնական, և թէ Եկեղեցւոյ ու  
Սահմանադրութեան հակառակ չ'ըլլայու օ-  
գուտն ու առաւելութիւնը ունի : Մասնաւոր  
որ իմ առաջարկած այս միջոցն՝ պարզապէս  
վարչական միջոց մ'է, որով Ազգային վար-  
չութիւնը կարող է, ինչպէս երբեմն հարկ ե-  
ղած ժամանակ թեմ մը, գաւառէ մը անջա-  
տելով զատ առաջնորդական վիճակ կաղմբելու,  
նոյնպէս ալ երբեմն հարկը պահանջած ատեն  
անջատ և ցրուեալ թեմ մը իւր մտակայ գա-  
ւառին հետ կցելով ու միացնելով՝ առաջնոր-  
դական մէկ վիճակ մ'ընել :

Ինչպէս կը տեսնուի, իմա առաջարկ չէ,  
այլ Նոխարքնիչ Գիւանի տեղեկագրին երեք  
ճրակացութեանց երկրորդին բարեփոխումն,

վան ղի նորա առաջին և երրորդ առաջար-  
կութեանց համախո եմ :

Չայս ասելով, Թիւրքէնտձեան նիկողոս  
էֆէնտի իւր հետեւեալ բարեփոխեալ բան-  
ձեան կը յանձնէ Գիւանին :

Ազգ. Երեսփոխանական Ժողովն,  
Ազգ. Կեդր. վարչութեան կողմանէ  
առաջնորդական վիճակաց վերաբերմամբ  
առաջարկեալ միջոցն ու եղանակը ՚ի  
դէպ և նպատակայարմար չը գտնելով,  
կ'որոշէ՝

Ա. — Յանձնարարել Կեդր. վար-  
չութեան՝ թէ այն ամեն հայաբնակ գա-  
ւառներն՝ որք առաջնորդ չ'ունին, և  
ուր ըստ տրամադրութեան Ազգ. Սահ-  
մանադրութեան՝ առաջնորդի ընտրու-  
թիւն կատարելու դիւրութիւն չ'կայ, և  
դիւրութիւն ունենալու ամեն միջոց կը  
պակսի տակաւին, Ազգ. Պատրիարքա-  
րանն առժամանակեայ կերպիւ միացնէ  
զայնս իւրեանց մերձակայ այն առաջ-  
նորդական թեմին՝ որոյ հետ որ յար-  
մարութիւն և պատշաճութիւն ունին  
միանալու, մինչև որ առաջնորդական  
վիճակաց նորոգ կացմակերպութեան  
խնդրովն զբաղող Յանձնախումբն աւար-  
տէ իւր աշխատութիւնը :

Բ. — Յանձնարարել Կեդր. վար-  
չութեան՝ որ փութացնէ առաջնորդա-  
կան վիճակներն նոր կաղմակերպու-  
թեամբ սահմանելու պաշտօնով կարգ-  
եալ Յանձնաժողովին գործն ու աշխա-  
տութիւնը :

Ն. Թիւրքէնտձեան

(Աստ Տ. Վահան Վրդու Տ. Մինասեան  
ի զիմաց Վարչութեան կ'ուզէ խօսք տոնուի,  
ասկայն Գեր. Սիմէօն Սրբազանի յայտարար-  
ութեան վրայ թէ՛ յիշեալն առ այս տրածն,  
եալ չէ, Ատենապետ էֆէնտի կը հրաւիրէ  
զՊատմագեան էֆէնտի 'ի բեմ, որ արդէն խօսք  
առած էր)

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.**—(Բեմն ելնելով)Վար-  
չութեան այդ առաջարկն զմեզ ինչ մ'աւելի  
զբաղեցուց. բայց ասոր առաջին պատճառն է  
այդ առաջարկին, ինչպէս նաև զայն բննող  
Նախածննութեան Գիւանի տեղեկագրին կան-  
խաւ առեմագրութեան մէջ չ'ստպագրուիլը,  
կամ կանխաւ երեսփոխանաց չ'չաղորդուիլը,  
որպէս զի զանոնք կարենայինք ուսումնասի-  
րել: Երկրորդ պատճառն է Վարչութեան ա-  
ռաջարկին խմբագրութեան ձեւն. Վարչու-  
թիւնը պէտք չէ այդքան ճապարղ և մանուա-  
ծապատ գրուած, այսինքն մեկնութեան կա-  
րօտ ծրագիր մը բերէր մեզ. այլ ինչպէս Տ.  
Մատթէոս և Տ. Խորէն Սրբազաններն, հետ-  
զհետէ պարտաւորեցան բացատրել, նոյն  
պատճառարանութեամբք պէտք էր գար այդ  
պայտօնական առաջարկն, յստակ եւ օրինա-  
կան ձեւով մը գրուած: Վարչութեան կողմէ  
ներկայացեալ որ եւ է առաջարկ պէտք է ե-  
զրոյականաց օրինական ծրագրով մը, յօդուած  
ու յօդուած խմբագրեալ. որպէս զի երեսփո-  
խանք գիտնան թէ ինչ բան բուխարկելու հը-  
րախրուած են: Յուսանք թէ, գէթ ասկէ ետ-  
քը հօգ կը տարուի այս մասին: Երրորդ և զը-  
խաւոր պատճառն է այն կանխած թէ՛ Վար-  
չութեան առաջարկին մէջ մի՛ գոչեցէ թողուն  
նպատակ մ'ըլլայ, ստժամանակեայ տնօրինու-  
թեանց պարտուակին ներքև, առաջին քայլն  
առնելու կեդրոնացման սիգրան հաստատու-  
թեան մասին. խնդիր մը, որ շատ վէճեր յա-  
րուցած է մեր մէջ, և Սահմանադրութեան  
հաստատութեան թուականէն ի վեր գոյութիւն  
ունի, հակառակ Սահմանադրութեան ոգւոյն

և տանին, որ Եկեղեցւոյ օրինաց, և ազգա-  
յին բարոց և հնաւանդ սովորութեանց վրայ  
հաստատեալ օրինադիրք մ'է եւ հետեւարար  
այս Ժողովն ալ չ'ունի ձեռնհասութիւն պղպի-  
սի արտօնութիւն մը տալու Վարչութեան:  
Սահմանադրութեան հիմնադիրներն առաջին օ-  
րէն իրաւունք համարած էին իշխանութեան  
կեդրոնացումը, առարկելով թէ՛ Ժողովուրդը  
խակ եւ անիրօձ լինելով, վարժին և Կեդրո-  
նին խերհաս անձանց առաջնորդութեան կա-  
րօտ է: Ասկէ ծագեցան բաւական վէճեր թէ  
'ի Պլիս և թէ 'ի զաւաստ, ինչպէս Երուսա-  
ղէմի Պատրիարքութեան խնդիր, Կիլիկիոյ Կա-  
թողիկոսութեան խնդիր և այլն, ասոնց ամեն-  
քըն ալ բարեկարգութեան նախանձախնդրու-  
թեամբ յուղեցան, Կեդրոնին չափազանց մի-  
ջամուտութեամբք:

Բայց փորձերն այնքան ապարդիւն չ'ե-  
ղան: Կեդրոնացման կարծիքը վարչական շըր-  
ջանակաց մէջ կը տիրէ միշտ, ուստի առիթ  
կը փնտռուի այդ դրութիւնն հաստատելու և  
'ի կիր արկանելու: Տակաւին կը յիշենք թէ,  
աս Ժողովին մէջ բարձր բերնէ քանիցս լսած  
ենք սա յայտարարութիւնը թէ, սուէք ինձ  
իշխանութիւն որ ես ընտրեմ առաջնորդները:  
Ուրեմն ինչպէս կ'ընայինք միամիտ լինիլ բեր-  
ուած առաջարկութեան ոգւոյն վրայ, և ընդ-  
դիմութիւն չ'յարուցանել անոր դէմ: Թողունք  
որ Կեդրոնացման դրութիւնը տեսակ տեսակ  
փնտտուց և ղեղձմանց տեղի կ'ընայ տակ, զա-  
ւանայուց ինքնօրինութեան կը փնտայ, Կեդ-  
րոնին անկայուն և յուղեալ վիճակաց հետ  
լծորդուելով զաւաստ ևս բաղդակից կ'ըլլան  
անոր, Կեդրոնին մէջ շահասիրութեան և կա-  
շառակիրութեան միջոցներ կ'աւելնան, և ին-  
թողունք այս ամենքը. բայց ինչպէս թողունք  
յիշել զաւանուցուց բնական ընդդիմութիւնն,  
որ Կեդրոնին դէմ պիտի յանձնէ. և այդ ընդ-  
դիմութեան յաղթելու համար զօրութիւն պէտք  
պիտի ըլլայ. տղջ զօրութիւնն ալ Բ. Գրոն ա-  
ջակցութեամբը կ'ընայ ստացուիլ. արդեօք Բ.  
Գրոնն պիտի աջակցէ՞ Պատրիարքարանի:

Ջբաղման համար ի՞նչ առատ միջոց : Բ. Դուռը կամ Պատրիարքարանի պիտի աջակցի այդ մասին և կամ, ո՛չ : Եթէ Պատրիարքարանի Կեդրոնացման դրութեան ոյժ սոյ, Պատրիարքարանը կարող կ'ըլլայ իւր ամեն հրամաններն և որոշումներն գործադրել տալ : սակայն ի՞նչ կ'ըլլայ հետեւանքը . Կեդրոնին և զառուայ յարարերութեան մէջ ձգտում տեղի պիտի ունենայ, և որչա՛ր պիտի ջանան այդ վիճակէն օգտիլ օտարները, որք մեր ազգայիններն իրենց Եկեղեցին որսալու միշտ կազմու պատրաստ են : Իսկ եթէ Բ. Դուռը Պատրիարքարանի Կեդրոնացման դրութեան չ'ընկալատէ, այն ատեն Պատրիարքարանի և զառուայ մէջ մեծ անջրպետ մը պիտի գոյանայ, և Բ. Դուռն երկուքին մէջ դատաւոր կանգնելու հարկին տակ, առաւելի սիրելի պիտի լինի զառուայի թղթայնոյ, բան Պատրիարքարանը : Յիշենք թէ Պատրիարքարանը կարող չ'եղաւ 'ի Պօլիս բերել տալ Եղեւեան Սըրբազանը, Տիգրանեան Սրբազանը, և արիւններ . . . :

ՍԸՎԱՅԵԱՆ Կ. ԷՖՁ. — (Ընդմիջելով) Յիշէ՛ցէք նաև Կիլիկիոյ ազգայնաց ապօրոյնութիւնը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖՁ. — Այո՛, Պատրիարքարանը չ'կրցաւ Կիլիկիոյ Կաթողիկոսին Պէրաքի փոփոխութիւնն ալ ձեռք բերել : Այս և ուրիշ խնդիրներ անուելի մնացին Բ. Դրան քով . և յայտնապէս տեսնուեցաւ թէ ի՞նչ է Պատրիարքարանն առանց Բ. Դրան գործակցութեան : Ուրեմն ի՞նչ հարկ նոր ի նորոյ այնպիսի խնդիրներ յարուցանել, յորս Բ. Դրան գործակցութիւնն անհրաժեշտ է և առանց անոր՝ Պատրիարքարանն կը մնայ անազդեցիկ : Ի՞նչ պէտք կայ ձանձրացնել Բ. Դուռն այնպիսի խնդիրներով, որք մեր էական պիտոյնները չ'են դարմաներ : Այդ տեսակ միջամտութիւն մը բնականաբար Ոստիկանական միջամտութիւնն հրաւիրելու պէտքն է :

րեւան կը հանէ . և յայտնի է որ եթէ Ոստիկանութիւնը միջամտէ մեր ներքին գործոց, ի՞նչ անհաճօ տպաւորութիւն կը գոյանայ ընդհանուր Ազգին վրայ : Նոյն իսկ այս փոփոխութիւն մէջ և շուրջը քանիցս փոփոխակից և սպառնալից զէպէրը պատահած են, սակայն մենք ինքնին, առանց խնդիրն ազգային շըրջանակէ դուրս հանելու, կարող եղած ենք հանդարտութիւնը հաստատել, և մինչեւ յաջորդ նիստ անոնց հետքն անգամ չ'թողուլ և ամեն բան իւր նախկին խաղաղ վիճակին վերածել քրիստոնէական եղբայրութեամբ :

ՅՆԿԵՐԵԱՆ Ա. ԷՖՁ. — Մաղթեմք որ յատուէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖՁ. — Նոյն իսկ իմ անձիս վրայ հաստատուած է այդ . փորձանքի վարկեաններու մէջ մտքէ իսկ անցուցած չեմ ազգային շըջանակէ դուրս ելնել : Այս ողին կը տիրէ մեր մէջ, մեծէ մինչեւ փոքրն այս մասին ջերմ նախանձանդիւր են . և կը ցանկան պահել, հայրական իշխանութեան ներքեւ, այս եղբայրական միութիւն :

Ուստի պէտք է խորշիլ այն ամեն դրութիւններէ, որք կ'եղծանեն մեր հայրական իշխանութիւնը և կը տկարացնեն ու կը ջնջեն մեր բարոյական գրութիւնը, որ մեր ազգութեան խարխիսն է :

Արդ թէեւ քիչ մ'աւելի զբաղեցանք Վարդութեան առաջարկին վրայ, բայց ստով մեծ սկզբունք մը վիճաբանութեան ենթակայ եղաւ, և ժողովին, ինչպէս նաև ազգին տրամադրութիւնն ընդհանրագէս հասկցուցաւ : Միւս կողմէն Վարդութիւնն ալ իւր առաջարկին ողին բացատրեց, և տեսանք թէ՛ Կարոյ, Մշոյ, և Արապկերի առաջնորդական խնդիրներն դարմանելու մտքը բերուած է այդ առաջարկ . . . :

ՍԸՎԱՅԵԱՆ Կ. ԷՖՁ. — (Ընդմիջմամբ) Տ.

Մատթէոս Սրբազան ատոր հակառակը հաստատեց :

ՓԱՓԱՋՅԱՆ Ս. ԷՖ. — Ստակոյն Տ. Խորէն Սրբազան յ'անուն Վարչութեան հաստատեց այս կարծիքս, զոր առաջին անգամ խօսելուս յայտնած էի : Եւ ըստ որում այդ խնդիրներն լուծման մէջ են չնորհիւ Բ. Գրան , այլ եւս Վարչութեան առաջարկն իւր կարեւորութիւնը կը կորանցնէ : Գիտէ ժողովք թէ երեք առաջարկութիւններ ներկայած եմ վերջընթեր նիստին որոց առաջինին յարեցաւ Տ. Խորէն Սրբազան յանուն Վարչութեան, Այլ առաջինն առաջարկն իմ չէր, այլ Տ. Մատթէոս Սրբազանին, թէ եւ ատենագրութիւնն չ'այտնէր այդ բացատրութիւնս, բայց Տ. Մատթէոս Սրբազան իւր խօսքին մէջ կը հաստատէ թէ, իրն է այդ առաջարկ յ'ատենի Խառն ժողովոյ, ուր չէ կրցեր իւր ձայնն լսելի ընել : Եթէ ես յարեցայ այդ առաջարկին , այն խորհրդով էր, որ կեղծացման դրութեան գէթ չափաւորեալ եղա նակն էր այդ :

Իսկ այժմ նկատելով թէ ժողովն գրեթէ միահամուռ կ'ընդդիմանայ Վարչութեան առաջարկին , որ շատ ուրախ առիթ մ'է ինձ , եւ նկատելով թէ Վարչութիւնն այլ եւս չը պնդեր իւր առաջարկին վրայ , այնպէս որ այսօր իսկ ներկայացուցիչ չ'ունի ժողովիս մէջ զայն պաշտպանելու համար , այլ եւս իմ այդ բարեփոխեալ Ա. առաջարկիս պէտքը չեմ տեսներ : Իսկ Բ. եւ Գ. առաջարկներս կը պահեմ . քանզի գիտեմ թէ անոնք են կեղծ Վարչութեան իրական ցաւերն առաջնորդական խնդրոց մէջ : Եւ ըստ որում կ'ըսեմ ժողովոյ Ատենապետ Սրբազանը խօստացաւ եկեղեցականաց պաշտօնավարութեան խնդիրն յատկապէս ներկայել ժողովիս , ես ալ այդ առաջարկներս կը վերապահեմ այն պահուն : Միայն չորրորդ կէտ մ'ալ կը յաւելում, զոր մտացած էի նոյն նիստին յիշատակել : Առաջնորդական պաշտօնը դժուարացնող միջոցն է

րէն մին էր առաջնորդաց պարուտի խնդիրը, որ Գ. առաջարկիս նիւթն էր . սակայն կայ ուրիշ դժուարացուցիչ պարագայ մ'ալ, որ օրուան խնդրոյն հետ շատ առնչութիւն ունի :

Պատրիարքարանը շատ կը միջամտէ առաջնորդական գործոց . սա ալ կեղծութեան դրութեան հետեւելու փոփոխութեան յառաջ կու գայ : Բաւական է որ զսառի մը մէջ քանի մը հօգի , մինչեւ իսկ մէկ անձ խնդիր մը հանէ առաջնորդին դէմ . Պատրիարքարանն իսկոյն կը միջամտէ և այնպիսի կեղծով , որ առաջնորդին իշխանութիւնն եւ ազդեցութիւնը կը տկարանայ . հարցում, հրահանգ , բնութեան հրաման կը տեղան կեղծունէն , որովհետեւ հակառակ կողմը կը զորանայ , եւ եթէ ոչ ան կարելի , դէթ դժուարին կ'ընեն առաջնորդին պաշտօնավարութիւնը : Ահա այս վիճակին համար եւս խոյս կուտան ձեռնհաս եկեղեցականք առաջնորդական պաշտօնէ : Այս մասին ուրիշ ըսելիքներ ունիմ , զորս կը վերապահեմ այն պահուն , յորում պիտի ներկայանայ եկեղեցականաց պաշտօնավարութեան խնդիրը :

Վարչութեան առաջարկին առիթ ուրիշ խնդիր մ'ալ ելաւ , զոր շուտից Սրբազանն էֆէնտի . եթէ գաւառ մը չուզէ կամ չ'իրենց իւր առաջնորդն ընտրել , պարտի Տեղապահ մ'ընտրել . իսկ եթէ չուզէ կամ չ'իրենց ընտրել նաև Տեղապահն , այն ատեն կեղծ Վարչութիւնը կ'ընտրէ տեղապահ մը և կը դրիէ 'ի նոյն գաւառ : Արդ ըստ որում Բ. Գրան առաջնորդական տեղապահներու չ'ուզեր տալ այն իշխանութիւն , զոր ունին Առաջնորդք տեղական Կառավարութեան գործոց մէջ , ասկէ դժուարութիւնը կը ծագին , և Վարչութիւնը կուզէ գիտնալ թէ , այս պարագային մէջ գէթ կրնայ առաջնորդական ընտրութիւն կատարել . . . .

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Ընդմիջելով) Երբէք Վարչութիւնը չ'ընտր առաջնորդական ընտրութիւն կատարել :

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Կրնայ առժամ եայ պաշտօնով առաջնորդական ընտրութիւն կատարել, մինչեւ որ գաւառն իւր ընտրութիւնը կատարէ :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Առաջնորդական պաշտօնը ց'կեանս է, որո՞՞ւմանակեայ չէ :

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Բայց ո՞ր առաջնորդ իւր վիճակին վրայ ց'կեանս պաշտօն վարած է : Ոչ ապարէն Տեղապահն ալ առաջնորդական պաշտօն կը վարէ : Արդ երբ ի հարկին կեդրոնը կ'ընտրէ Տեղապահն, կրնայ ընտրել նաև ՚ի հարկին առաջնորդն, բայց միշտ առժամանակեայ պաշտօնով, մինչեւ որ գաւառն կատարէ իւր ընտրութիւնը :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Կեդրոնը Տեղապահ ընտրելու իրաւասութիւնն ալ չ'ունի :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կը հրաւիրեմ զՂազարոսեան էֆէնտի որ իւր անվերջանալի ջոկովն ընտրուի շարունակ չ'ընդմիջէ զատենարանն :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Բայց թ'ո՞չ սըխալ չ'խօսի :

**ՍՈՒՐԻԵՆԵԱՆ Ա. ԷՖ.** — Երեսիտիսանք ընդհանրապէս աղքատին կեանքն ուսումնասիրած լինելով, կարող են ըմբռնել թէ՛ Ատենաբարան պիտի թէ՛ ճիշդ կը խօսի, և հետեւաբար հարկ և տեղի չկայ Ղազարոսեան էֆէնտի ուղղիչի պաշտօն ստանձնել :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ատոր տարակոյտ չըկայ . մասնաւոր թէ՛ օրինապահութեան առաջին օրինակն Ղազարոսեան էֆէնտի պարտիտայ՝ յիշելով թէ՛ պահ մ'առաջ զինքն ընդմիջող երեսիտիականս զէ՛մ նոյն ինքն էր զանգատողն :

( Ղազարոսեան էֆ. վերտին կը փորձէ ընդմիջել զԱտենաբարան առանց ունին դնելու Իււանի աղքարարութեանց, որ հուսի յետոյ կը յայտնէ թէ՛ եթէ շարունակէ սցայտն, սիտի պարտաւորի ՚ի կարգ հրաւիրել զինքն )

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Ասկից վերջն այլևս չ'սլիտի խօսիմ, բայց կուզեմ որ այդ տեսակ սխալ տեղեկութիւնք ժողովոյս վրայ գէշ ազդեցութիւն չընեն :

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Կը յիշեցնեմ Բըրիտոստոր էֆէնտի թէ, իւր վարչական պաշտօնավարութեան օրով հրատարակեալ Սահմանադրական հրահանգին մէջ կայ այդ իրաւասութիւնը : Կեդրոնը երբ կը տեսնէ որ գաւառ մը չ'ունի կամ չ'կրնար, յուզման եւ այլ պատճառներով, ընտրել առաջնորդ կամ տեղապահ, Կեդրոնն իրաւունք ունի անմիջապէս ընտրել տեղապահ մը և զրկել անդ : Կեդրոնին այս իրաւունքն անկասկտի է . գաւառ մը առանց հովտի թողուլ կարելի չէ, հակառակ է եկեղեցական օրինաց, եւ ինչ որ Եկեղեցոյ պահանջուած է, Կեդր. վարչութիւնը վայելիկն մը մէջ կ'ընդունի Բ. Դոնէն, երբ անոր դիմէ : Եթէ Տեղապահ դնելու անպատեհութիւն կայ, սցայտի հարկեցողից պարագայի մէջ Պատրիարքարանք Բ. Դրան զիմեով իրաց վիճակը կը ծանուցանէ, և գաւառին իւր առաջնորդն ընտրել ապա հարկին վրայ կը պնդէ . և երբ անկարելի կ'ըլլայ այս, Կեդրոնն ինք կը կատարէ այդ ընտրութիւնը, պատասխանատու մնալով այս ժողովին :

**Կեդրակացնեմ.** — Վարչութեան առաջարկին զլիսաւոր շարժանքներն այժմ արձուած կամ բարձուելու վրայ են, ուրեմն այդ մասին որ եւ է տնօրէնութեան մը հարկ չ'կայ : Իսկ եթէ՛ Վարչութիւնը հարկադրի առաջնորդական խնդրոյ մասին, որ եւ է առժամանակեայ տնօրէնութիւն մ'ընել, կրնայ ըսնել իւր պատասխանատուութեան ներքեւ : Ուստի կ'առաջարկեմ, խնդիրը վերադարձնել Վարչութեան, ճանչնալով թէ՛ Վարչութիւնն ձեռնհաս է առժամանակեայ տնօրէնութիւն ըսնել առաջնորդական խնդրոց մասին, երբ հարկը պահանջէ, պատասխանատու մնալով առ Ազգային ժողով :

ՄԵՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Վարչու-  
թեան առաջարկին վրայ յայտնելիք կարծիքս  
զխրմբարձնելի ընելու համար, ամիտիմ զայն  
իմ ըմբռնման համաձայն :

Գաւառաց առաջնորդները կեդրոնէն կար-  
գելու արտօնութիւնն ա՛յն դաւառաց համար  
միայն կ'ուզէ Վարչութիւնն, ուր՝ ըստ տրա-  
մագրութեանց Սահմանադրութեան՝ առաջ-  
նորդական ընտրութիւն կատարել կարելի չէ-  
եւ այս բացառիկ արտօնութիւնը կը խնդրէ  
կարծ միջոցի մը համար : Իսկ Նախաձեռնու-  
թեան Գիւանը կը մերժէ Վարչական առա-  
ջարկն, հակառակ նկատելով զայն Սահմանա-  
դրութեան, որոյ տրամադրութեամբք դա-  
ւառացոց իրաւունքն է ընտրել իրենց ա-  
ռաջնորդն : Բազմաթիւ երեւիոխանք ալ այլ-  
եւ այլ տեսակէտներով, նմանապէս Սահմա-  
նադրութեան ոգւոյն հետ անհաշտ կը նկատեն  
Վարչութեան առաջարկն, եւ ամբողջովին  
կամ մասնակի կը յարին Նախաձեռնութեան  
Գիւանի տեղեկագրին եզրակացութեան : Եւ  
այս առթիւ կը յուզին միանգամայն առաջ-  
նորդական խնդրոյն յարակից զանազան կէ-  
տեր, որք թէ եւ կրնան մեծ կարեւորութիւն  
ունենալ, բայց չ'են կրնար կարծեմ կցուիլ  
Վարչական առաջարկին, քուէի ենթարկելու  
համար, վասն զի՝ արդի կացութեան մէջ մա-  
նաւանդ՝ առաջնորդական վիճակաց խնդիրը  
մի այնպիսի խնդիր է, որ նմա վերաբերեալ  
մէն մի կէտը շրջահայեաց ուսումնասիրու-  
թիւն կը պահանջէ, զի այդ կէտերէն ոմանք  
կրնան բարձրագոյն խնդրոց ընդհարիլ, որոց  
վրայ խօսելու առեւնը չէ այսօր, եւ խօսելու  
պատեն առիթն ալ շատ հեռի չ'է :

Հետևորար, Վարչութեան առաջարկն  
իւր բնութեան մէջ պահելու համար՝ մի կէտ  
միայն կը տեսնեմ պարզելի : Ի՞նչ ըսել է երբ  
է՛ք ի՞նչ անհարգելի ընտրել էր առաջնորդն ըստ  
Սահմանադրութեան : — Ես այնպէս կը հասկնամ  
թէ՛ կը նշանակէ որ այդ գաւառին մէջ դեռ  
Սահմանադրութիւն չէ գործադրուած, և կամ

գործադրութենէ դադրած է այն : Ուրեմն այդ  
օրինակ գաւառներն անհովու չ'իջողով ինչո՞ս  
առաջնորդներն առժամայց կերպիւ կեդրոնէն  
ընտրելի՞ կը պատրաստէ՞, կը զիւրէ Սահմանա-  
դրութեան գործադրութիւնն այդ գաւառաց  
մէջ, թէ ոչ : Երբ կ'ենթադրեմք թէ՛ ստու-  
գապէս ունիմք այնպիսի գաւառներ, օր Սահ-  
մանադրութիւնն գործադրուած չ'իկնելով չ'են  
կարող առաջնորդ ընտրել, անտարակոյս չ'ալ-  
տի կրնամք ըսել թէ՛ զանոնք անհովու թո՞-  
ղուլն աւելի սահմանադրական եղած լինի :

Այս տեսակէտով, թէ՛ Սահմանադրու-  
թեան սկզբունքն անյեղելի պահելու, թէ՛ մեր  
Վարչութեան արժան եղած յարգանքը չ'ըլա-  
նալու և թէ՛ մինչեւ ց'արդ եղած առաջարկ-  
ներն ըստ ոգւոյն հաշտեցնելու համար, կ'ա-  
ռաջարկեմ խնդիրը բուէարկել հետեւեալ բա-  
նաձեւով :

« Ազգային Ժողովը կ'որոշէ որ, Վար-  
չութիւնն իրեն ներկայացոյնէ ցուցակն այն  
գաւառաց, յորս ժողովուրդն անկարող  
է Սահմանադրութեան տրամադրութեանց  
համաձայն ընտրել իւր առաջնորդն,  
բացատրէ այս անկարողութեան պատ-  
ճառներն, և Ազգային Ժողովէն արտօնու-  
թիւն առնելէ յետոյ՝ ՚ի հարկին՝ կարգէ  
այդ գաւառաց առաջնորդներն : »

ՁԱՅՆԵՐ — Շատ լոււ, շատ լոււ, քուէ՛ :

ՈՒՐԻԵ ՆՍՍԱՐԱՆՆԵՐԻ — Վիճարանու-  
թեան փակումը քուէի դրէ՛ք, Ատենապետ է՞-  
քի նախ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ խնդիրն ըստ  
բաւականին լուսարանուած է և Երեսփոխանք  
քուէ կը պահանջեն, հարկ է նախ քուէի դնել  
վիճարանութեան փակումը :

Ձայս ասելով Ատենապետ է՛քի նախ Ժողո-  
վոյն կամայը կը դիմէ, որ Վ ի զէ՛մ միաձայնու-

Թեամբ ԿՈՐՈՇԵ փակել վիճարանութիւնն :

ԱՍՏԵՆԱՊԵՏ ԷՅԹ. — Վիճարանութիւնն փակուած է և պիտի ձեռնարկեմք բուժարկութեանն : Ուստի կը փութամ խնդրոյն վիճակն ներկայացընել :

Նախածեռնութեան Գիւտանն կ'առաջարկէ մերժել Վարչութեան բերած առաջարկն, որուն կը ձայնակցի և Ղաղարտեան Գրիստոստուրէ Էֆէնտին : Թիւրքէնոճեան էֆէնտի բարեփոխում մը կը ներկայացնէ, իսկ Մէրէմ-Գուլի էֆէնտի կառավարիչ մի այլ բաննալն :

Ուստի ներկայացեալ սոյն զանազան առաջարկութիւնք կարգաւ ժողովոյդ բուժին պիտի ենթարկեմ, ըստ օրինի սկսելով ամենէն վերջ եկած առաջարկէն՝ որ Մէրէմ Գուլի էֆէնտիինն է :

(Ատենադպիր էֆէնտի կրկին անգամ կընթեանու յիշեալ բանածեւը :

ՁԱՅՆ ՄԸ — Բայց չ'հասկցանք թէ այդ բանածեւը մերժուա՞ն է Վարչական առաջարկին, թէ ընդունելութիւնն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅԹ. — Բանածելին այդ վերջին մասը՝ որ է «Աղդ ժողովէն արտօնութիւն առնել յետոյ՝ ՚ի հարկին՝ կարգէ այդ գաւառոց առաջնորդներն» կառավարիչ մը կը յանդէս բերէ, վասն զի յետ ներկայացման՝ կարելի է ժողովն դիտողութիւն մ'ընէ, մասնաւոր թէ այդ վերջի պարբերութիւնն բուժարկելով՝ ընդունած կըլլամք նաև սկզբունքն :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅԹ. — Վերջէն ընելիքն իս ոչ այժմէն որոշելու եմք, որպէս զի մի գուցէ տպագային մէջ անասճմուն վիճարանութեանց դռներ բացուին : Ուրեմն այս տեսութեամբ հետեւեալ բարեփոխեալ առաջարկն կուգամ ներկայացնել :

Երբ դաւառի մը մէջ առաջնորդը կը պակսի մահուամբ կամ հրաժարմամբ, կեղք. Վարչութիւնն անմիջապէս կընտրէ տեղապահ մը՝ որոյ պաշտօնը պիտի լինի առ առաւելն մինչև մէկ տարի սահմանադրապէս կատարել տալ առաջնորդի ընտրութիւնն, հակառակ պարագայի մէջ պատահանատու լինելով կեղքունական Վարչութեան առջև. երբ կարելի չըլլայ առաջնորդին՝ ընտրութիւնը գաւառին մէջ կատարել, Վարչութիւնն այս մասին տեղեկութիւն բերէ Րնդհ. Ժողովոյ և յատուկ արտօնութիւն ստանայ առաջնորդն ինքն ընտրելու :

Ա. Ա. Սուրենեան

ՁԱՅՆԵՐ — Ձեր այդ առաջարկն տարբեր խնդիր է :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՅԹ. — Իմ այս առաջարկս ընդհանուր առաջնորդական խնդրոյն կը վերաբերի, մինչդեռ Մէրէմ-Գուլի էֆէնտիինն՝ մի միայն մի քանի վիճակաց վրայ կը մասնաւորի : Հետևորդ իր ընդհանուրին շահն սպառապանող՝ կառավարիչ մը որ երբ դաւառի մը մէջ առաջնորդը կը պակսի մահուամբ կամ հրաժարմամբ, կեղք. Վարչութիւնն իրաւունք ունենայ ընտրել անմիջապէս տեղապահ մ'որոյ պաշտօնը լինի առ առաւելն մինչև մէկ տարի սահմանադրապէս կատարել տալ առաջնորդի ընտրութիւնն, հակառակ պարագայի մէջ պատահանատու լինելով առաջի կեղք. Վարչութեան, և երբ կարելի չըլլայ առաջնորդական ընտրութիւնն գաւառին մէջ կատարել, Վարչութիւնն այս մասին տեղեկութիւն բերէ Րնդհ. Ժողովոյ և յատուկ արտօնութիւն ստանայ առաջնորդն ինքն ընտրելու :

ԱՍՏԵՆԱՊԵՏ ԷՅԹ. — Ձեր այդ առաջարկած օրէնքն, Սուրենեան էֆէնտի, գոյութիւն ունի արդէն :

**ՄԵՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ.** — Հարկ կը տեսնեմ միանգամ ևս կրկնել սա կէտը թէ՛ երբ կըսուի որ գաւառ մը անկարող է ընտրել զիր տաւջնորդ, կը հասկցուի թէ՛ նոյն գաւառին մէջ Սահմանադրութիւնն կամ բնու չ'է գործադրուած, և կամ ոչդպիսի գաւառներն առանց Առաջնորդի թողուլ՝ ղանոնք անխիստ նուշեան մէջ պահել, և Սահմանադրութեան գործադրութիւնն տեւականապէս անկարելի ընել կը նշանակէ, ռեժիսի և այս տեսութեամբ կ'առաջարկեմ որ Վարչութիւնն ժողովիս ներկայէ ցուցակն այն վիճակաց յ'որս ըստ Սահմանադրութեան առաջնորդի ընտրութիւն չէ կրցած կատարուիլ, այդ անկարելութեան պատճառներն ալ հազորդէ ժողովիս, որպէս զի ըստ այնմ, եթէ հարկ է, արտօնութիւն տրուի իրեն այդ վիճակներն անգլուխ անհովիւ չթողու համար նոցա առաջնորդներն ընտրելու :

**Տ. Վ. ՎՐԻ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ** — (Ընդմիջմամբ) Բացատրեցէք Ձեր առաջարկութիւնը, վասն զի ոչինչ կրցանք հասկնալ :

**ՄԵՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ.** — Համբերեցէ՛ք, ես ալ արդէն բացատրելու համար է որ կը խօսիմ. և մի նեղուիք Ձեր չ'հասկընալէն, վասն զի խորհրդարանական վիճակին բնական պահանջումն է արդէն որ չ'հասկըցողներ ալ գտնուին, չ'համողողներ ալ : Եթէ իմ առաջարկիս մէջ ոմանց համար զժողովարհասկանալի հանգամանք մի կայ, սա է որ, Վարչութեան առաջարկին, ընդունելութեան ձևին տակ այն աստիճան բարեփոխուած է որ սկըզբունքը լիովին կը մերժուի : Բայց կ'աղաչեմ յիշեցէ՛ք որ իմ բանաձևս ներկայելէ յառաջ ըսի թէ՛ թէ՛ Սահմանադրութեան սկզբունքն անցելի պահելու, թէ՛ մեր Վարչութեան արժան եղած յարգանքը զլրացալու և թէ՛ մինչև ց'արդ եղած առաջարկներն ըստ ողջոյն հաւտեցնելու համար սոցպէս կ'առաջարկեմ :

( Ծիծաղք )

**ԱՍՅՆԵՐ** — Գուէ՛, բուէ՛ :

Հետևաբար Ատենապետ էֆ. բուէի կը գնէ խնդրին, և ժողովն՝ համաձայն Մէրեմ-Գուլի էֆէնտի կողմանէ ներկայացեալ բանաձևին՝ միաձայնութեամբ կՈՐՈՅԷ որ, « Վարչութիւնն իրեն ներկայացնէ ցուցակն այն « գաւառաց, յ'որս ժողովուրդն անկարող է « Սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն ընտրել իւր տաւջնորդն, բացարձէ « այս անկաշտութեան պատճառներն, և Ազգային ժողովէն արտօնութիւն առնել « ի հարկին՝ կարգէ այդ գաւառաց առաջնորդ « ներն » :

( Սոյն բուէարկութեան մէջ ձեռնպահ կը մնայ Սուրէնեան Աւետիս էֆէնտի ) :

**Գ.**

Խնդիր երեսփոխանութեան Թաղեոս Էֆենտի գեկեանի .

**ԱՍՏԵՆԱՊԵՏ ՏՅ.** — Պէկեան էֆէնտի կողմանէ Ազգային ժողովոյս մատուցեալ Սեպտեմբեր 14 թուակիր նամակն թէ՛ և առեւնական գործողութեանց կարգին մէջ կարողացուցաւ, բայց ըստ որում նոյն պահուն երեսփոխաններէն շատերն տակաւին ներկայ չ'էին, ուստի հարկ կ'ըլլայ, բուն խնդրոյն անցնելէ առաջ մի անգամ, ևս ընթեռնուլ զայն :

(Ատենադպիր էֆէնտի վերատին կ'ընթեռնու Պէկեան էֆէնտի զիրն : )

( Յետ ըմբոստն )

**ԱՍՏԵՆԱՊԵՏ ՏՅ.** — Ինչպէս կը տեսնէք, Պէկեան էֆէնտի ներկայ գրութեամբ կուզայ յետս կոչել իւր նախորդ յանձնառադիրն :

Ուստի կը հրուիրեմ զերեւոյթականս առ այս խօսք առնուլ և յայտնել իւրեանց կարծիքն :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՑ. — Պէկեան էֆէնտիի Երեսփոխանութեան խնդիրն ասկից տալ էր. կու տարբեր ձևերու տակ ներկայացաւ հոս, մին՝ հօրատակութեան խնդիրն էր որ գտու զիւր լուծում, և միւսն՝ վերջնորելութեան խնդիրը, որոյ մասին ո՛ր է է տնօրինութիւն մ'ընելէ յառաջ՝ յանձնարարուեցաւ Մայր-Դիւանին որ այս առթիւ Ժողովոյ նախորդ մի որոշումն բաղեւ չին ատենագրութիւններէն ներկայէ առ ինքն. Մայր-Դիւանն, որոյ սնդամ էի և ես, առ այս հարկ եղածն տնօրինելով բերաւ իւր տեղեկագիրն, որ անցաւ 'ի խնդրոյ կարգ :

Ուստի կ'առաջարկեմ նախ այդ բաղուածքն ընթեռնուլ, գիտնալու համար թէ՛ կարող եմք այժմ վաւերել զայս ընտրութիւն՝ առանց հախառակելու Ժողովոյս նախորդ որոշման :

Գաղով Պէկեան էֆէնտիի յետս կոչման գրոյն, կարծեմ չ'եմք կարող զայն նկատութեան առնուլ մինչև որ այդ մասին կարծիքներն չ'փոխանակուին, մասնաւոր թէ՛ պարագայք բոտ մը կայ, որ կրնայ այդ գիրն իւր պարզութենէն հանել :

ԶԱՅՆԵՐ — Թո՛ղ կարգացուի այդ բողոսածն :

Հետևարար Ատենադպիր Էֆէնտի կ'ընթեռնու Պէկեան էֆէնտիի Երեսփոխանական խնդրոյն վերաբերեալ բաղուածն :

«Բաղուած 1878 ամի Հոկտեմբեր 6 — Նոյեմբեր 10, 24 — Դեկտեմբեր 29 և 1879 փետրվար 2 ի նիստերու Ատենագրութիւններէն, յաղագս Պէկեան թագէտս էֆէնտիի երեսփոխանական խնդրոյ :

1878 Հոկտեմբեր 6 Նիստ Ժ. — Պէկեան թագէտս էֆէնտի մի տեղեկագիր կրնթեռնու յորում կը յայտնէ թէ Հայկական խնդրոյն մէջ Ս. Պատրիարք Հայրն սխալ քարաքականութեան հետեւած է : Ժողովն Պէկեան էֆ. ի սոյն քննադատութիւններն առ ոչինչ և անտեղի կը նկատէ :

1878 Նոյեմբեր 10 Նիստ ԺԲ. — Ժողովն կը դատապարտէ զՊէկեան էֆէնտի, դռնբաց նստի մէջ ներումն խնդրել Ս. Պատրիարքէն իւր ըրած անիրաւ ամբաստանութեանց համար : Նաև պարսաւանօք յանդիմանութիւն կրել ժողովոյ որոշմանցը արհամարող և անաստող գտնուելուն համար : Եւ ըստ որում Պէկեան էֆ. նոյն նստին ներկայ չէր, ուստի սոյն պատժոյն գործադրութիւնն կը թողուի այն նստին՝ ուր առաջին անգամ ներկայ գտնուի Պէկեան էֆէնտի :

1878 Նոյեմբեր 24 Նիստ ԺԳ. — Պէկեան էֆէնտի բողոքախառն հրաժարագիր կը յղէ Ժողովին իւր երեսփոխանական պաշտօնէն, յորում ամբաստանութիւններ կը թափէ թէ՛ Ս. Նախագահին, թէ՛ Դիւանին և թէ՛ Ժողովոյ մեծամասնութեան դէմ :

Ժողովն կ'որոշէ յղել զայս գիր նախաձեռնութեան Դիւանին իբր պատճառաբանեալ հրաժարական :

1878 Դեկտեմբեր 29 Նիստ ԺԴ. — Պէկեան էֆ. ի հրաժարագրոյն մասին նախաձեռնութեան Դիւանը իւր տեղեկագիրը կը բերէ որոյ եզրակացութիւնըն է,

Ա. Թէ Պէկեան էֆ. իրաւունք չու-  
նի ժողովոյ պատժական տնօրէնութիւն-  
ները գործադրելէ առաջ երեսփոխա-  
նական պաշտօնէն ինքնին հրաժարելու .

Բ. Թէ պէտք է որ Պէկեան էֆէն-  
տի յառաջիկայ նստին ներկայանայ Ս.  
Նախադահէն ներուամ խնդրելու և պար-  
սաւանօք յանդիմանութիւն լսելու .

Գ. Իսկ եթէ Պէկեան էֆ. յառաջի-  
կայ նստին չ'ներկայանալով խոյս տայ  
իրեն դէմ տրուած պատժական տնօրէ-  
նութեանց գործադրութենէն, ժողովը  
պիտի հրաժարեցնէ զնա իւր Դիւանին  
միջոցաւ երեսփոխանական Աթոռոյն ան-  
արժան հաշակելով .

Ազգային ժողովն 17 քուէով, ա-  
ռանց հակառակ քուէի, Կընդիմինի Նա-  
խաձեռնութեան Դիւանի սոյն եզրակա-  
ցութիւնքն :

1879 Փետրվար 2. Նիստ ԺԶ. —  
Նախաձեռնութեան Դիւանի տեղեկա-  
դրին Գ. րդ. եզրակացութեան համաձայն՝  
Ատենապետ վաչան զՊէկեան էֆէնտի,  
երեսփոխանութեան անարժան և Ազգային  
ժողովին նրաժարեցուցեալ նրատարակեց ո :

ԱՌԱՐՏԱԼ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահա խնդրոյն բուն  
վիճակն : Կը տեսնուի ուրեմն թէ՛ ակից ա-  
ռաջ Ատենապետ Փաշայի առաջտրկութեամբն  
Ազգային ժողովս զՊէկեան էֆէնտի երեսփո-  
խանութեան անարժան և հրաժարեցուցեալ  
հրատարակած է :

Ստիպան քանի մը տարի վերջ՝ յիշեալն  
ուրիշ Թաղէ մը դարձեալ կընտրուի, որ նախ  
կը յայտնէ իւր յանձնառութիւնն և այժմ կ'ել-  
նէ յետս կոչել զայն :

Ուստի Գուրգէն էֆէնտի կառուջարկէ սոյն

զիրն մէկ կողմ թողլով այժմ, բուն խնդիրն  
ձեռք առնուլ և որոշել թէ՛ Պէկեան էֆէնտի  
կարող է յետ այսու երեսփոխանական պաշ-  
տօն վարել թէ ոչ :

Այս է ահա վիճանութեան ենթարկեալ  
կէտն :

ՄԱԳՊՈՒԼԵԱՆ Է. ԷՖ. — Շատ իրաւացի  
կը գտնեմ Գուրգէն էֆէնտիին առաջարկն :  
Պէկեան էֆէնտի իւր յանձնառագիրն որով որ  
զրկած է, թող անկից ետ ուզէ :

ՉՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կը խափարէի  
որ Պէկեան էֆէնտիին նախորդ յանձնառագիրն  
մի անգամ կարգացուէր աստ, տեսնելու հա-  
մար թէ արդեօք իւր գրոյն միջոցու զըման  
ո և է արատյայտութիւն մը ըրած է, քանի  
որ իւր դէմ այդ աստիճան խիստ պատժակա-  
ն տնօրնութիւններ կան :

ԳՈՐԳԵՆ Յ. ԷՖ. — (Պատասխանելով)  
Ոչ, զընում չ'կայ, պարզ յանձնառագիր մ'է  
այն :

ՉՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ուրեմն քանի որ  
այդ պատժական տնօրնութիւնը անդործադ-  
րելի մնացեր են, և ինք իւր յանձնառագիր  
միջոցու այդ մասին ո և է յիշատակութիւն  
մ'իսկ չ'է ուզած ընել, և թէ այսօր նկատու-  
ղութեան առնունք այդ խնդիր սոյն պայմանի  
մէջ, այն ատեն երեսփոխանաց ամեն տեսակ  
անկարգութիւնը գործելու դուռ մը բաց թո-  
ղած կը լինիմք :

Հոս ամեն տեսակ ապօրինութիւնը գոր-  
ծելով պատժ է փախուտու տուլու համար երես-  
փոխանք կ'հրաժարին և յետոյ տննչան թաղէ  
մը չորս ու կէս քուէով կը վերընտրուին և մեք  
ալ վաւերացնելու կատարուինք :

Ուստի այդ ընտրութեան վաւերացումն  
աստ խնդիր ընեն իսկ ոճիր մ'է ժողովոյս ար-  
ժանապատուութեան դէմ :

**ՍԵՎԱՅՆԱՆ Կ. ԷՖ.** — Կը ձայնակցիմ Զօպանեան էֆէնտի :

**ՍՈՒՐԵՆՅԱՆ Ա. ԷՖ.** — Ոճիր բառը շատ ծանր կը գտնեմ : Պէկեան էֆէնտին մարդասպանութիւն ըրած է , ի՞նչ ըրած է :

( Աստ Ատենապետ էֆէնտի կազմարարէ Զօպանեան էֆէնտի յետս կոչել անընդամբառն : )

**ՋՕՊԱՆՅԱՆ Մ. ԷՖ.** — Ատենապետ էֆ. ես մասնաւոր դիտմամբ չէր որ արտասանեցի այդ բառ և եթէ Դիւանը հակախօրհրդարանս կան կը գտնէ զայն , պատրաստ եմ յետս կոչել , վասն զի ես « փոքր թիւ մը » ըսել ուղեցի :

( Աղմուկ եւ շփոթութիւնք )

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Պէկեան էֆէնտի երեսփոխան չ'է , հետեւաբար իւր խնդրոյն վերաբերեալ այդ պաշտօնագրերն այս ժողովոյս հետ անհշուտիւն մը չ'ունին : Ուրեմն հարկ է որ զանոնք ամենքն մեկանց զրկեմք վարչութեան , որպէս զի եթէ յիշեալն մի որ ուրիշ թաղէ մ'ալ ընտրուի , յիշեցնէ ընտրուցալ ժողովոյս նախորդ որոշումը : Զի այս երեսփոխանական ժողովն չ'է կարող իւր որս չ'ուճէն ետ դառնալ անպայման կերպիւ :

Արդարև չ'եմ ըսեր թէ՛ Պէկեան էֆէնտի յաւիտեան դատապարտեալ թող մնայ , կրնայ ներողութիւն գտնել , բայց հարկ է որ ինքն ալ քիչ մը խոնարհի . . .

**ՋԱՅՆԵՐ** — Կեցցէ՛ս :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — ( Շարունակելով ) Կը յիշէք որ բարեկամս Թիւլայէնտճեան էֆէնտի ևս նմանորինակ պարագայի մը մէջ գտնուեցաւ , բայց ի վերջոյ Ս. Պատրիարք Հոր ներողութեամբ վերտախն ընտրուելով վաւեւ

բացաւ և սիրով ընդունուեցաւ : Իրաւ է թէ՛ Պէկեան էֆէնտի իմ ալ բարեկամս է , բայց Ազգային ժողովն ալ բարերարս է , և եթէ իրեն սեղ յանցաւորն ես լինէի , հաւատայցէք որ հարիր անգամ եկած և ներողութիւն խնդրած էի :

Ուստի կ'առաջարկեմ Պէկեան էֆէնտի խնդրոյն վերաբերեալ դրութիւնք վերադարձնել Վարչութեան յայտնելով թէ՛ թէ՛ և հըստ պատկութեան խնդիրն լուծուած է , բայց երկրորդ կէտն քանի որ չ'է պարզուած , չ'է կարելի վաւերացնել զիւր ընտրութիւնն :

**ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ.** — Համա՛մտ եմ Ղա. դարունեան էֆէնտի առաջարկութեան :

**ՄԵՂԻՔԵԱՆ Մ. ԷՖ.** — Իրաւ է թէ՛ աւելից մէկ ու կէս տարի առաջ ժողովս յանձնարարած էր իւր Մայր-Դիւանին Պէկեան էֆէնտի երեսփոխանական խնդրոյն մասին իւր նախորդ որոշմանց բաղուածն ներկայել իրեն , բայց ըստ իմ խնդիրն այսօր բոլորովին փակուած սլոտ է նկատել , վասն զի թէ՛ և Պէկեան էֆէնտի մէկ ու կէս տարի առաջ երեսփոխան կընտրուի և յանձնառութիւնն կը յայտնէ , բայց վաւերացումն մինչև ց'արդ յառաղելէ յետոյ , այսօր կուգայ իւր նոյն յանձնառագիրն յետս կոչել . ըսել է թէ՛ Պէկեան էֆէնտի այսօր յանձնառագիր չ'ունի և հետեւաբար չ'է կարելի վաւերացնել իւր ընտրութիւնն ըստ ներքին կանոնագրի որ կը արամադրէ թէ՛ « ժողովն չ'է կարող վաւերացնել այն ընտրութիւնն որոյ յանձնառագիրն ասպնջովեալ չ'է » :

Այս առթիւ աւելորդ չ'եմ համարիր յաւելուլ թէ՛ Պէկեան էֆէնտի իւր յանձնառագիրն յետս կոչելով վեհաճնն դարձ մը կատարած եղաւ :

**ՄԱԳՈՒՆԵԱՆ Զ. ԷՖ.** — Կ'առաջարկեմ որ այս խնդրոյս վրայ եղած խօսակցութեանց հաւարածոյն չ'արձանագրուի ատենագրութեան

մէջ, վասն զի կարևորութիւն իսկ չ'ունի : Պէկեան էֆէնտիի երեսփոխանութեան և Հայտատուութեան խնդիրներն տարի ու կէսէ 'ի վէր՝ թէ՛ թաղերն, թէ՛ վարչութիւնն և թէ՛ Ազգային ժողովս զբաղեցուցին, և այսօր կեղէն իւր ներկայ յետս կոչման գրովն փախուստ տու :

Ուստի մի անգամ ընդ միշտ պէտք է վճուել թէ՛ այս անձն իրր երեսփոխան Հոս բաղմիւ կարող է թէ ոչ :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — Պէկեան էֆէնտիի երեսփոխանական տեղեկագիրն ասկից մէկ ու կէս տարի առաջ մեզ ներկայացած լինելով, ց'արդ անով զբաղած եմք, ինչպէս նա եւ ասկից առաջ ալ Գում-Գարուէն ընտրուած եւ իւր վաւերացումն դարձեալ Հոս խնդիր եղած է . . .

ՁՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ.—(Ընդմիջմամբ) Գում-Գարուի Ընտրողական ժողովն Պէկեան էֆէնտիի երեսփոխանութիւնն չէ՛ վաւերացուցած եւ ո՛չ ալ ժողովոյս եկած է այն :

ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ. — (Շարունակելով) Ուստի կատաղարկեմ այսօր իսկ վերջացնել իրենդիրն՝ մի անգամ ընդ միշտ որոշելով թէ՛ այս անձն յետ այսու կրնայ երեսփոխան լինիլ թէ ոչ : Զի եթէ խնդրոյն այս կէտն այժմէն չ'զարգուի, շատ հաւանական է թէ՛ նա ուրիշ թաղէ մ'ալ վերընտրուի եւ մեր սեղանին վրայ շաբունակ Պէկեանի խնդիր ունենամք :

ԶԱՆԱԶԱՆ ՆՍՏԱՐԱՆՆԵՐԷ — Քուէ՛, քուէ՛ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ երկու կարծիք կը տիրէ ժողովոյս մէջ : Ոմանք կառավարկեն անցնիլ բուն խնդրոյն եւ մի անգամ ընդ միշտ որոշել թէ՛ Պէկեան էֆէնտի կարէ՞ երեսփոխան լինիլ թէ՛ ոչ, եւ այլք դիտել կուտան թէ՛ ըստ որում յանձնառաջիր չ'լայ, հետեւ

և ապէս հարկ չէ նկատողութեան առնուլ եւ խնդիրն :

Ուստի սոյն երկու տարբեր առաջարկներն ժողովոյց քուէ՛ին պիտի ենթարկեմ կարգու :

Հետեւեալք քուէարկութիւն կատարուելով, ժողովն Չի դէմ միաձայնութեամբ կՈՐՈՇԷ առանց նկատողութեան առնլու Պէկեան էֆէնտիի յետս կոչման դիրն, անցնիլ բուն խնդրոյն վիճարանութեան :

(Յե՞ր + = է = ր = ւ = ր = ւ = ր = ւ = ր = ւ = )

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը երկու քուէի դէմ միաձայնութեամբ որոշեց առանց նկատողութեան առնլու Պէկեան էֆէնտիի յետս կոչման դիրն, անցնիլ իւր երեսփոխանական խնդրոյն :

Ուստի առ այս կը հրաւիրեմ ղերեալիտան Տեարս խօսք առնուլ թեր ու դէմ :

ՍՐՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ես չ'պիտի վրէտընեմ թէ՛ Պէկեան էֆէնտին անցելոյն մէջ յանցաւոր էր թէ ոչ, այլ որովհետեւ կը տեսնուի թէ ժողովն որոշում մ'ունի անոր նկատմամբ, հարկ է որ ինքն խոնարհի այդ որոշման առջեւ :

Եթէ ճշդապահութեան առաջին օրինակը այս ժողովս չուզէ տալ, եւ մինչեւ իսկ մէկ անձի հաճելի լինելու չ'պիտի ստորնանայ, յայնժամ իւրաքանչիւր Երեսփոխան ամենայն ազատութեամբ եւ անարգել կրնայ Հոս իւր ուզածն խօսիլ, ապահով լինելով թէ՛ իւր դէմ տնօրինուած ո եւ է պատիժ կրնայ անգործադրելի մնալ եւ ինքն մի քանի տարիէ յետոյ վերընտրուիլ առանց ո եւ է դիտողութեան :

Ուստի խնդիրն իւր սկզբան մէջ քննելով կը պահանջեմ որ Ազգային ժողովոյ կողմանէ եղած ո՛ եւ է տնօրինութիւն եւ վճիռ ճշդու գործադրուին, ո՛րք ալ լինի խնդրոյն ենթա

կայն, իսկ հակառակ պարագայի մէջ, այնք  
պիտիբ չկարենան իբր երեսօխոսան վաւերա-  
նայ եւ Աթոռ ունենայ այս ժողովոյ մէջ :

**Տ. ՏԱՃԱՏ ՎԱՐԴ. ՈՍԿԱՆԵԱՆ** — (Իբր  
անկամ Վարդուբեան—բեմն Էլեկտր) Պէկեան  
էՖէնտի 1878 ին այս ժողովէս դատավճիւ  
մ'ընդունած լինելով, այսօր իւր վերքնապա-  
թեան վաւերացումն խնդրոյ տակ ինկած է :

Ուրեմն հարկ է մտնել բուն խնդրոյն մէջ  
ղիւրացնելու համար անոր լուծուիլ :

Արդ, 1878 ին երբ Պէկեան ԷՖ. պաշ-  
տօնագիրը 'ի ձեռին ելաւ այս Ռեմիս վրայ եւ  
իբր աշատամիտ երեսօխոսան՝ քննադատեց  
այնպիսի խնդիր մը որ առ ինքն զբաւած էր  
ընդհանուր ազգին ուշադրութիւնն . . .

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ձեռ կրնար թոյլ տար  
չայր Սուրբ, որ այդ տեսակ խնդրոց մէջ  
մտնէք : Կամ խնդրոյն արդի վիճակին վրայ  
խօսեցէք եւ կամ հանձնէք թողուլ զրեմն :

**Տ. ՏԱՃԱՏ ՎԱՐԴ. ՈՍԿԱՆԵԱՆ** — խնդրոյն  
կը դառնամ անսպողով Գիւանիդ ազգաբարբու-  
թեանց, — Պէկեան էՖէնտին չ'ամբաստանեց  
այս ժողովս եւ ոչ ալ անպատուեց դայն, այլ  
պարզ քննադատի մը պաշտօնն 'ի գործ դրաւ  
եւ կարծիք մը յայտնեց, բայց որովհետեւ այն  
ժամանակ մտքերն կարի զրգռեալ էին, ուս-  
տի զինքն անիրաւ եւ երեսօխոսանութեան օ-  
նարժան դատեցին : Իսկ այժմ, այժմ չէ խն-  
դիրն իւր ծայրայեղութեան հասցնել քաղա-  
րական այլ եւ այլ նկատումներով . . .

(Մեծ յուզում ժողովոյ մեջ)

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — ('ի մայն գանգակի)  
Քաղաքական նկատումներ չկան այս խնդրոյս  
մէջ Հայր Սուրբ, այլ պարզ երեսօխոսանական  
վաւերացման խնդիր է : Առտի հարկ է Ձեզ հաս-  
նել եզրակացութեան, ապա թէ ոչ չեմ կրնար  
թոյլ տալ շարունակելու :

**ՋԱՆԱԶԱՆ ՆՍՍԱԲԱՆՆԵՐԷ** — եզրակացու-  
թիւն, եզրակացութիւն . . .

**Տ. Տ. ՎԱՐԴ. ՈՍԿԱՆԵԱՆ** — Շատ լաւ :  
Ուրեմն եզրակացնելով կառնարկեմ որ, հա-  
մաձայն արդարութեան՝ Պէկեան էՖէնտի  
երեսօխոսանական ընտրութիւնը վաւերանայ,  
զի՛ այլ էր 1878 թուականն, եւ այլ է 1884  
թուականն :

**ՅԵՐԱԶ Մ. ԷՖ.** — (Բեմն Էլեկտր) Խորհրդ-  
դարանական կենացս զեղեցիկ օրերէն մին պի-  
տի լինի ինձ համար այն օրն ուր Ազգային  
ժողովը վիճարանութեան ենթարկէ Տաճատ  
Վարդապետին պահ մ'առաջ ակնարկած ըն-  
դարձակ խնդիրն, եւ կը մաղթեմ որ երես-  
օխոսանական պաշտօնավարութեանս միջոցն  
պատահի այդ, զի ունիմ շատ ընկրկներ եւ  
տալիք շատ պատասխաններ : Սակայն, քանի  
որ Գրեան եւ ժողով այդպիսի վիճարանութիւն  
մ'անպատե՛ն կը նկատեն այժմ, եւ իրաւամբ,  
Պէկեան Թուրքոս էՖէնտի մասնաւոր պարա-  
զային վրայ միայն պիտի խօսիմ այսօր հա-  
մառօրէն :

Նախ եւ առաջ պիտի ընեմ թէ ազգային  
զործերէ անտեղեակ անձեր եւ մի քանի նո-  
րեկ երեսօխոսաններ կը կարծեն թէ Պէկեան  
էՖէնտի հակառակ էր այն խնդրոյն ուժ ակ-  
նարկեց Տաճատ Վարդապետ : Այդ կարծիքը  
սխալ է ըրրորովն, եւ ասոր համոզուելու  
համար բաւ է կարգալ 1878 հոկտեմբեր 6 ի  
ատենադրութեան մէջ Պէկեան էՖէնտի խօս-  
քերն, Նա կուսակից էր Ազգային խնդրոյն,  
որպէս կրնամ հաստատել 'ի հարկին : Ինչ որ  
կը քննադատէր նա, այն ուղղութիւնն է որ  
կը կարծէր թէ տրուած էր այդ խնդրոյն :  
Իւր ներկայացուցածը պարզ բարեփոխում էր  
օրեմն :

**Տ. Տ. ՎԱՐԴ. ՈՍԿԱՆԵԱՆ** — Այո՛, արդպէս է :

**ՋԵՐԱՋ Մ. ԷՖ.** — Նոյնպէս սխալ է կարծել թէ Պէկեան էֆէնտիի հարուածները ներսէս Պատրիարքին դէմ միայն ուղղուած էին : Անոնք կ'ուղղուէին նոյն իսկ Ազգային ժողովոյ դէմ որ, խնդրոյն ուղղութիւնը միաձայնութեամբ ՚՛ն. Սրբազնութեան խնամութեան յանձնելէ յետոյ, քանիցս վաւերացուցած էր զայն իւր հաւանութեամբ, մանաւանդ թէ հանդիսաւոր բուժարկութեամբք արտայայտեալ վստահութեան ցոյցերով : Ինչորոյն տէր կանցնած էր ուրեմն Նրեպիտանութիւնն, եւ ասոր դէմ էր որ կը շարձակէր Պէկեան էֆէնտին, երբ կը կարծէր յարձակել Ս. Պատրիարքի դէմ միայն :

Այժմ, խնդրը կանոնական կուսանին մէջ սահմանափակելով, պիտի յիշեցնեմ թէ, երբ վերջին անգամ ներկայացաւ մեզ, ես էի որ յայտնեցի թէ կանոնադիրը կը պարունակէ տրամադրութիւն մը որ կը ներէ ժողովոյս դասնալ իւր որոշումէն կամ փոփոխել զայն, որոշումէն գոնէ երեք ամիս ետքը : Նոյն պահուն այդ յօդուածը աչրիս առջև է'ունենալով տարտամ եւ անձիշդ կերպով կրցած էի յիշել զայն Այժմ ունիտ կանոնադիրն 'ի ձեռին, եւ կը տեսնեմ թէ այդ տրամադրութիւնը, որ 75 րդ յօդուածը կը կազմէ, պայմանի մը ենթարկուած է : Որպէս զի ժողովն իւր որոշումը փոխէ, պէտք է որ որոշուալ խնդրին հեղինակին կողմէն, վարչութեան կամ Պատրիարքին կողմէն՝ զործադրութեան անտեղութիւն պատճառելով ստիպողութիւն խնդրուի : Արդ, Պէկեան էֆէնտին չ'է կարող զգալի 75 րդ յօդուածէն, զի իրեն համար սահմանուած պատժը զործադրելի էր : Նա չ'ուզէց հպատակել Ազգային ժողովոյ որոշմանն. ուրեմն այս պարագային մէջ զործադրութեան անտեղութիւն չը կայ այլ պարզապէս աննստազանութիւն :

**ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ.** — (Ընդմիջելով) Ինչպէ՛ս չ'կայ զործադրութեան անտեղութիւն, քանի որ թաղ մը չ'ուզէր համակերպիլ այդպիսի որոշման մը :

( Աղմուկ եւ շփոթութիւն )

**ՋԵՐԱՋ Մ. ԷՖ.** — Համակերպելու հրահրուողը թաղ չ'էր, այլ յանցաւորաբար դատուած Նրեպիտան մը : Ի՛նչ կը նշանակէ զործադրութեան անտեղութիւն. — կը նշանակէ թէ Ազգային ժողովը կրնայ տալ որոշում մը զոր երբ վարչութիւնը զործադրելու երնէ, բացարձակապէս անիրանալի դանձ զայն կամ աղգափաս . այս պարագային մէջ է որ զործադիր մարմինը կը խնդրէ Նրեպիտանութեանէն որ եւ անու իւր որոշում : Պէկեան էֆէնտիի պարագայն կը տարբերի, զի նա կըրնար Ազգ. ժողովոյ որոշմանն համեմատ ներսէս խնդրել Ս. Նախագահէն. ուրեմն զործադրութեան անտեղութիւն չը կայ հաս, այլ յանցաւոր դատուած անգայնոյ մը կողմէ սպրտամբութիւն Ազգային բարձրագոյն ժողովին դէմ : Պէտք է զիտնալ թէ Նրեպիտանութեան որոշումը, որու դէմ կ'ընդհանրանայ Պէկեան էֆէնտին, որէնք մ'է յոյնքին, քանի որ կը բղխի կանոնադիր 84 րդ յօդուածէն : Այս յօդուածը կը տրամադրէ որ, եթէ Նրեպիտանի մը Պատրիարք Սրբազնութիւնը դէմ ըրած ամբաստանութիւնն անիրաւ գատուի ժողովէն . . .

**ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ.** — Պէկեան էֆէնտիի ըրածը ամբաստանութիւնն չ'էր :

( Վերստին աղմուկ եւ շփոթութիւն կը տիրէ ժողովարանին մէջ )

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — ( Բարեկարգութիւնն վերանաստատելով ) Յաւելով կը տեսնեմ որ Նրեպիտան Տեարք իրենց սովորական սրագրւումով ինքնութիւնն կը կորսնցնեն այս պահուն : Ուստի կը հրաւրեմ ընդմիջողը թող տալ Ատենարանին շարժակէլ իւր խօսքն :

**ՋԱՅՆԵՐ** — Ետրու՛նով կեցէք, շարժակէցէք :

**ՁԵՐԱԶ Մ. ԷՖ.** — Սուրէնեանն էֆէնտիկն  
 կը խնդրեմ որ, փոխանակ անգաղար ընդմի-  
 ջեբու, խօսք առնու և զայ հերքել մեր ըսած-  
 ները, որպէս զի մեզ ալ ստպարէզ բացուի  
 պատասխանելու: (Շարունայով) Կ'ըսէի թէ  
 Կանոնագրի 84րդ յօդուածը կը տրամադրէ որ,  
 եթէ ամբաստանութիւնն անիրաւ դատուի ժս-  
 զողէն, ամբաստանողք պարտուոր են ներում  
 խնդրել Պատրիարք Արքայանէն զունրաց նիս-  
 տի մէջ:

**ՍՈՒՐԵՆԵԱՆ Ա. ԷՖ.** — Ատիկայ տրամա-  
 րանական չ'է:

**ՁԵՐԱԶ Մ. ԷՖ.** — (Առ Սուրհեանն ԷՖ.)  
 Ուրեմն օրէնքն է որ անտրամաբանական կ'ե-  
 րևի Ձեզ, զի Կանոնագիրն է որ կը խօսի:  
 Արդ, կը հարցնեմ Ձեզ, միթէ գործադրուե-  
 ցա՞ւ 84րդ յօդուածը Պէկեանն էֆէնտիկն նը-  
 կատմամբ: — Ոչ: Միթէ Պէկեանն էֆէնտիկն,  
 օրոյ ամբաստանութիւնն անիրաւ դատուեցաւ  
 այս ժողովէն, կրե՞ց օրէնքին տրամադրած  
 պատիժը: — Ոչ: Ուրեմն Կրեւոյտիսանութիւնը  
 չ'է կարող ջնջել իւր որոշում, առանց զոհե-  
 լու իւր արժանապատուութիւնն և իւր կանոն-  
 ներն:

Կը գոյժեմ Պէկեանն էֆէնտիկն խոհեմութիւ-  
 նըն, որով պարագայից փափկութիւնն 'ի նկատ  
 առնելով այժմ, փորձած է մեր Օրակարգէն  
 բաժնաւ այս անպատահ խնդիրն, հրաժարա-  
 գիր ուղղելով մեզ: Այլ կը ջատակմ որ ժողովս  
 չ'է կարող զիջում մ'ընել իրեն, առանց ուռ-  
 նակոխ ընելու այն օրէնքներն որոցմով միայն  
 ունի գոյութիւն:

**ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Խօսքը Գորգէն է.  
 Ֆէնտիկին է:

**ԳՈՐԳԷՆ Յ. ԷՖ.** — Արդէն ժողովոյ փակ-  
 ման որոշեալ ժամն եկած հասած է, Ատե-  
 նոպետն էֆէնտիկն, և եթէ խօսք տար ինձ այժմ,  
 զուցէ մէկ ժամ զիս լսել պարտաւորիք, վս-  
 սըն զի խնդրոյն խօսք մտնելով զայն 'ի հիմանց  
 պիտի քննեմ: Ուտի, կ'ստաճարկեմ խնդրոյն  
 շարունակութիւնն թողուլ յառաջիկոյ նստին:

Ատենոպետն էֆէնտիկն առ այս ժողովոյն  
 կամաց կը դիմէ, որ ԿՈՐՈՇԷ: Պէկեանն էֆէն-  
 տիկն երեւոյտիսանական խնդրոյն վիճարանու-  
 թեան շարունակութիւնն թողուլ յառաջի-  
 կոյ նստին:

**Գ. Բացակայութիւնք**

Ատենոպետն էֆէնտիկն ժողովին կը հաղոր-  
 զէ սոյն նստէն ԳՐԹ բացակայութիւնն ունեցող  
 հետեւեալ երեւոյտիսանաց անձուներն.

- S. Գարբիէլ Քնյ. Խանձեան
- Մարտիրոս էֆ. Էքսէրձեան
- Միշրան » Պաշճէզարուեան
- Նշան » Պոյաճեան
- Մանուկ » Ասլանեան
- Սենեքերիմ » Մանուկեան
- Մկրտիչ » Կիւմրիչեան

և կը յարէ թէ յառաջիկոյ նստին համար ըստ  
 օրինի յատուկ կոչնագիր պիտի յղուի անոնց:

Ատենանն կը վերնոյ ժամը 6 ին, յաջորդ  
 նիստն երեք շաբաթէն գումարելու որոշմամբ:

Ատենագիրք Ատենոպետ  
 Յ. ԱՐԵՍԿՈՒՆԻ Տ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ

# Ն Ի Ս Տ Ժ Ա.

14 Սեպտեմբեր 1884

## ԱՂԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԾԱՆՔ

ԿԵՂԵՐԱՆՍԻՆ ԵՐԵՍՓՈՒԾԱՆՔ  
ԵՆԵՂԵՐԱՆՍԻՆ

### Ա. Վ. իմակ

- 1 Սիմէօն Եպս. Սէֆէրեան
- 2 Կարապետ Վ. Բագրատունի
- 3 Վահան Վրդ. Տ. Մինասեան
- 4 Կարապետ Քան. Սէֆեան Բ
- 5 Խորէն Աբգեղ. Նար-Պէյ Բ
- 6 Մատթէոս Եպս. Իգմիրլեան Բ 2
- 7 Յովհաննէս Քան. Մկրեան Բ
- 8 Գրիգոր » Աճէմեան Բ Պ
- 9 Յակոբ Վ. Ա. Փափազեան
- 10 Խորէն Քան. Փէնչիվանեան Բ
- 11 Ոսկի Քան. Օհանեան
- 12

### Գ. Վ. իմակ

- 13 Եղիշէ » Ա. յովազեան
- 14 Յովհաննէս Վ. Սրշարունի
- 15 Սահակ Քան. Տ. Սարգսեան Բ
- 16

### Ե. Վ. իմակ

- 17 Յովսէփ Վարդ. Ա. յովազեան
- 18 Գարեգին » Թամարեան Բ 2
- 19 Սուքիաս Քան. Ստեփանեան Բ 2
- 20 Գարրիէլ » Խանճեան Բ 3

- Բ Բացակայութիւն առաջին :
- Պ » Երկրորդ :
- 2 » բանաւոր պատճառաւ :

ՍՏԵՊԵՆՆԵ  
Ա. Վ. իմակ

- Գում-Գաբու, Կետիկ-Վաշա-  
Է. Գում-Գաբուի ղոբս
- 21 Գրիգոր Պէրպլերեան Բ Պ
- 22 Կարապետ Աղաբղմանեան Բ 2
- 23 Բարթեղ Քիւրքճիպաշեան Բ
- 24 Յ. Մէրեչի-Գուլի
- 25 Տիգրան Հիւնքեարայէլէնտ. Բ Պ
- 26 Աւեսախ Սուրէնեան
- 27 Տօքթ. Ա. յովազեան
- 28 Կէորդ Ա. յովազեան
- 29 Յակոբ Եէմէնիճեան
- 30 Յակոբ Գուրգէն
- 31 Խաչիկ Կամարակեան
- 32 Միհրան Ինճէեան Բ 11
- 33 Մարտիրոս Էքսէրճեան Բ 3
- 34 Մանուէլ Պէշիրեան
- 35
- 36
- 37

Բ. Վ. իմակ  
Պեշիկարաշ

- 38 Բարսեղ Հայաճեան Բ 4
- 39 Յովհաննէս Փէրէստէճեան Բ 2
- 40 Մելքոն Պարոնիկեան
- Եկնի-Գաբու
- 41 Լեւոն Քարամանճեան Բ Պ
- 42 Մարուգէ Յրէնիկեան
- 43 Պօղոս Էնքսէրճեան
- 44 Յակոբ Պօշակեան

- Իսկիւտար Ս. Խաչ
- 45 Սիմէօն Ֆէլիկեան
- 46 Գարրիէլ Նորատունկեան Բ

47 Գասպար Գասպարեան Բ 2  
48

### Իսկիւտար Ս. Կարապետ

- 49 Միհրան Պահճէգափուլ. Բ 3
- 50 Պօղոս Թորգոմեան Բ
- 51 Տրդատ Փափազեան Բ 2
- 52 Յակոբ Հաճեան Բ
- Գ. Վ. իմակ
- Գասըմ-Բաշա
- 53 Գասպար Չերազ Բ
- Բերա
- 54 Գրիգոր Սէլիմյէճեան Բ
- 55 Ղաղար Հոփուեան
- 56 Յարութիւն Պէլկեան
- 57 Նշան Պօյաճեան Բ 3
- 58 Վիշէն Օրմանեան
- 59 Սինքերբիմ Մանուկեան Բ 3
- 60 Համբարձում Մաջպուլի.
- 61 Մանուէլ Ալանեան Բ 3
- 62

### Միջագիւղ

- 63 Տիգրան Եւտուֆեան
- 64 Մկրտիչ Գազանճեան Բ 2
- 65 Մկրտիչ Հանրմեան Բ
- 66 Ստեփան Տամատեան Բ
- 67
- Պեյգօգ Է. Ղալարիա
- 68 Միգայէլ Մամիկոնեան
- Գ. Վ. իմակ
- Քուզկուճուզ Է. Իճատիէ
- 69 Մկրտիչ Մէջպուրեան
- 70 Սիմօն Մաքրուտեան Բ

Գատըղիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Գառնիկ Յովակիմեան	Բ Պ Կարին	124 Ստեփան Փափաղեան
72 Կարապետ Հաղարեան	101 Սերովբէ Ազնաւորեան	Տիվրիկ
Նարլը-Գաբու	Քեօքանեա	122 Նշան Գարադաշ
73 Միհրան Տէօբմէճեան	102 Աւետիս Թընկերեան	Բ 2 Զէյբուն Եւ Մարաշ
Եհէի-Մահալլէ Սամարիոյ	Աղրիանուպօլիս	123
74	103 Յակոբ Պարոնեան	Տրապիզօն
Թօփ-Գափու	Նիկոմիդիա	124
75	104 Կարապետ Ս.Իւթիւճեան	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Եւ Ս.	Ակն	125 Կարապետ Սէթեան
Աստուածածիկն	105 Յակոբ Գորեան	Բ Տիգրանակերտ
76	Ղարանիսար	126 Միհրան Զօպանեան
Գուրու-Զէլմէ	106 Կարապետ Երէցեան	Վան
77 Կարապետ Սըվաճեան	Արաբկիր	127 Մարկոս Աղաբէգեանց
Հիսար Եւ Պօլաճի-Գիւղ	107 Կարապետ Խաչիկեան	Բ Պ Աղրամար
78	Բաղիշ	128
Նոր-Գիւղ Եւ Սրեկիա	108 Արփիւր Արփիարեան	Հայկաբ Եւ Այնբապ
79	Պրոսա	129
Պալատ	109 Քրիստոստօր Ղաղարոսեան	Սեբաստիա
80 Մկրտիչ Կիւմրուչեան	Եւդոկիա	130 Մկրտիչ Յ. Մէլիբեան
81 Ռէթէոս Թաղէոսեան	110 Կարապետ Կիւրճեան	Ռուսձուգ
82 Ներսէս Երէցեան	Ամասիա	131
Փարակեօմրիկ	111 Համարձուժ Ալաճաճեանք	Քաբերդ
83 Յովհաննէս Թորոսեան	Բայու	132
84 Կարապետ Փանոսեան	112 Յովհաննէս Ազնաւորեան	Զմշկածագ
Ե. Վիճակ	Եղեսիա	133
Սամարիա	113 Յակոբ Իւթիւճեան	Գաղատիա
85 Յակոբ Արշակ	Մանճրլըս	134
86 Սարգիս Աղաբէգեան	Հանըն	Ատանա
87 Յովհաննէս Նուրեան	115	135 Մինաս Զերազ
88 Ռուբէն Կիւմրուչկերտան	Երզնկա	Սղերդ
89	116 Ռէթէոս Պէրպէրեան	136 Մատթէոս Ալէքսանեան
90	Թերիքտաղ	Եօզատ
91	117 Տիգրան Գ. Սինանեան	137
92	Կեսարիա	Մալաթիա
93	118	138 Գէորդ Վարդանեան
94	Խարբերդ	Իգմիր
Խազիւղ	119	139
95 Յովհաննէս Արշակունի	Պալքրեսեր	Եգիպտոս
96 Ռուբէն Պուլուրեան	120 Ստեփան Գօրջեան	Բ 2 140 Աբրահամ Մուրառեան
97 Յակոբ Խանտանեան		
98 Նիկողոս Թիւրպէտեան		
99		
100		

## ԱՋԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆԳԱՄՔ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

4.	Տ.	Խորէն	Արքեպս.	Նար—Պէյ	Ա. Արեւորդէ
2.	»	Սիմէոն	Եպս. Բ	Սէֆէրեան	Բ. »
3.	»	Մատթէոս	»	Իզմիրեան	
4.	»	Գարեգին	Վրդ.	Թաթարեան	
5.	»	Վահան	»	Տ. Մինասեան	Ա. Արեւորդէ
6.	»	Տաճատ	»	Ոսկանեան	Բ. »
7.	»	Յակոբ	»	Ա. Փախազեան	
8.	»	Յովհաննէս	»	Արշարունի	
9.	»	Յովհաննէս	Կհյ.	Մկրեան	
10.	»	Աահակ	»	Տ. Սարգսեան	
11.	»	Առքիաս	»	Ստեփանեան	
12.	»	Գրիգոր	»	Աճէմեան	
13.	»	Խորէն	»	Փէհլիվանեան	
14.	»	Կարապետ	»	Սէթեան	

ԱՆԳԱՄՔ ՔԱՂԱՔՕԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Ազնաւորեան	Յովհաննէս	Էֆէնտի	
2.	Այվազեան	Տօք. Նշան	»	Բ. Արեւորդէ
3.	Գրլըճճըեան	Գէորգ	»	
4.	Թորոսեան	Յովհաննէս	»	Ա. Արեւորդէ
5.	Խըտըրեան	Գրիգոր	»	
6.	Խօրասանճեան	Թովմաս	»	
7.	Հազարեան	Կարապետ	»	
8.	Հալաճեան	Բարսեղ	»	Բ. Արեւորդէ
9.	Մաքսուտեան	Սիմոն	Պէյ	Ա. »
10.	Մամիկոնեան	Միքայէլ	Էֆէնտի	
11.	Պապօեան	Պապի	»	
12.	Սթիմարաճեան	Գէորգ	»	
13.	Փէշտիմալճեան	Տօքթօր Տիգրան	»	
14.	Բիւրքճիխանլեան	Կարապետ	»	

**ՊԵՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ**

ՍՈՒՐՈՒՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՈՐԳ

1-ին հատված	1-ին հատված	սուճղով	մեկուսի	2	4
«	2-րդ հատված	«	«	3	4
«	3-րդ հատված	«	«	4	4

**Ա. — Ատենական դորձողութիւնք .**

1. — Խնդիր վաւերացման ժ. նախի Ատենազրութեան .
2. — Տեղեկագիր երեսփոխանական ընտրութեան խաղիւղի .
3. — Իրտողութիւնք ի վերայ անտիպ ատենազրութեանց շրջանի 1883 ամի .
4. — Ծրագիր Ն. էֆ. Քիւլպէնոճեանի յարգաւատենական զիտուղութեանց .
5. — Հարցումս Սուրենեան Ա. էֆէնտիի 'ի մասին Մնակեան ժառանգութեան եւ Բերայի հրկիւղեցող հաշուական խնդրոց .
6. — Զեկուցագիր Թ. էֆ. Պէկեանի 'ի մասին երեսփոխանութեան իւրոյ .
7. — Հաշուեցոյց 1883-84 ամի եւ ելութացոյց 1884-85 ամի Ս. Ա. Թոռոյն երուսաղիմայ .

ՅՈՒՆՈՒՆ ԺԵՐՄԱՍԵՐԿԻ ԳՅՈՒՄՈՐԳ

- Բ. — Շարունակութիւն վիճարանութեան 'ի վերայ Առաջնորդական խնդրոյ  
 Գ. — Խնդիր երեսփոխանութեան Թ. էֆէնտի Պէկեանի .

1-ին հատված	1-ին հատված	սուճղով	մեկուսի	2	4
«	2-րդ հատված	«	«	3	4
«	3-րդ հատված	«	«	4	4
«	4-րդ հատված	«	«	5	4
«	5-րդ հատված	«	«	6	4
«	6-րդ հատված	«	«	7	4
«	7-րդ հատված	«	«	8	4
«	8-րդ հատված	«	«	9	4
«	9-րդ հատված	«	«	10	4
«	10-րդ հատված	«	«	11	4
«	11-րդ հատված	«	«	12	4
«	12-րդ հատված	«	«	13	4
«	13-րդ հատված	«	«	14	4
«	14-րդ հատված	«	«	15	4
«	15-րդ հատված	«	«	16	4
«	16-րդ հատված	«	«	17	4
«	17-րդ հատված	«	«	18	4
«	18-րդ հատված	«	«	19	4
«	19-րդ հատված	«	«	20	4
«	20-րդ հատված	«	«	21	4
«	21-րդ հատված	«	«	22	4
«	22-րդ հատված	«	«	23	4
«	23-րդ հատված	«	«	24	4
«	24-րդ հատված	«	«	25	4
«	25-րդ հատված	«	«	26	4
«	26-րդ հատված	«	«	27	4
«	27-րդ հատված	«	«	28	4
«	28-րդ հատված	«	«	29	4
«	29-րդ հատված	«	«	30	4